22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 232(4850)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Պանետտան Իրանին հարվածելը չի բացառում

ԱՄՆ պաշտպանության նախարար Լեոն Պանետտան CBS հեռուստաալիքին տված հարցազրույցում հայտարարել է, թե մեկ տարուց կամ ավելի շուտ Իրանը կարող է ստեղծել իր առաջին միջուկային մարտալիցքը: Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ը դա համարում է միանգամայն անընդունելի եւ պատրաստ չէ համակերպվել «միջուկային Իրանի» գոյությանը:

ԱՄՆ-ը «բոլոր անհրաժեշտ միջոցները կձեռնարկի Իրանում միջուկային զենքի մշակումը կանխելու համար», ասել է Պանետտան: Նա դրական պատասխան է տվել հեռուստալրագրողի այն հարցին, թե ԱՄՆ-ը կարո՞ղ է արդյոք հարվածել իրանցիների միջուկային օբյեկտներին, եթե հետախուզական տվյալները հաստատեն Իրանում միջուկային զենքի մշակմանը վերաբերող լուրերը:

# Ցեղասպանության ժխտման պատժելիությունը Ֆրանսիայի համաեվրոպական պարտավորություններից է

Այս հաստատումն է կատարել ֆրանսիահայ «Հայկական դատարան» կազմակերպության նախագահ **Ռոբեր Այդաբիրյանը** առանձին հաղորդագրությամբ: Այսօր Ֆրանսիայի Ազգային ժողովի լիագումար նիստում քվեարկվելիք օրինագիծը՝ «Պատժել օրենքով ճանաչված ցեղասպանությունների ժխտումը», ընդունվելու դեպքում փաստորեն Ֆրանսիան նպատակ ունի պատժելու բոլո՛ր ցեղասպանությունների եւ մարդկության դեմ կատարված հանցագործությունների ուրացումը կամ ժխտումը, միաժամանակ օրենքի ուժով պաշտպանելու այդ հանցագործությունների զոհերին ու ժառանգներին: Դրանով, ըստ Այդաբիրյանի, Ֆրանսիան փաստորեն իր օրենքը համապատասխանեցնելու է համաեվրոպական օրենքի համապատասխան դրույթներին, որոնք Եվրոմիության խորհրդի կողմից ընդունվել են 2008 թ. նոյեմբերի 28-ին «Ցեղասպանության եւ օտարատյացության (քսենոֆոբիա) որոշ տեսակների եւ դրսեւորումների դեմ պայքարի մասին» թիվ 2008/913/JAI որոշմամբ: Այդաբիրյանը նույն հաղորդագրության մեջ (այն մեզ տրամադրել է Հայ դատի տարածքային գրասենյակի պատասխանատու Հիլդա Չոբոյանը) հիշեցնում է, որ դեռեւս 1993-ին Շվեյցարիան ընդունել է համապատասխան՝ հակացեղասպանական օրենքը, որն իր հերթին ներշնչել է Եվրոմիության վերոհիշյալ օրենքի ընդունումը: Սլովակիան, դեռ վերջերս, քրեականացնելով Հայոց ցեղասպանության ժխտումը, սեփական օրենքը պատշաճեցրեց համաեվրոպականին:

**ՎՃՌԱԿԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ**

# Արա Աբրահամյանի դիմումը Ֆրանսիայի Սենատի նախագահ Ժան-Պիեռ Բելին

***Այսօր Ֆրանսիայի Սենատը կքննարկի Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը: Քննարկման նախօրեին Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարի կամքի դեսպան Արա Աբրահամյանը դիմել է Սենատի նախագահ Ժան-Պիեռ Բելին: Դիմումի տեքստում մասնավորապես ասված է.***

**Մեծարգո պարոն Բել,**

**Թույլ տվեք Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության անունից Ձեզ խորին մեծարանք եւ հարգանք հայտնել, հաղորդելով, որ աշխարհի շատ երկրներում հայկական համայնքները մեծ գոհունակությամբ են ընկալել Ֆրանսիայի Սենատում Հայոց ցեղասպանության փաստի ժխտումը քրեականացնող օրենքի առաջիկա քննարկման լուրը:**

**Օսմանյան կայսրությունում իրագործած Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի հրեշավոր ոճրագործությունն է, որի հետեւանքով մեր 1,5 մլն հայրենակիցներ սպանվեցին, հարյուրհազարավորները զրկվեցին կացարանից եւ ունեցվածքից, դարձան հարկադիր աքսորյալներ, ապաստան գտնելով աշխարհի տարբեր երկրներում:**

**Այդ ողբերգությունը վերապրողներից շատերը հույսով եւ հավատով դիմել են Ֆրանսիային, ինչպես դիմում են ավագ քրոջը՝ վստահ լինելով, որ նրա մոտ կգտնեն ապաստան եւ մխիթարանք: Այդ ժամանակվանից հարյուրհազարավոր հայեր դարձել են Ֆրանսիայի Հանրապետության օրինավոր քաղաքացիներ:**

**Թեեւ համաշխարհային հանրությունը, շատ երկրներ, միջազգային հասարակական կազմակերպություններ ցասումով դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, ժամանակակից Թուրքիան ոչ միայն չի ընդունում Օսմանյան կայսրության այդ ոճրագործության բուն փաստը, այլեւ դրա ամեն մի հիշատակում ընկալում է իբրեւ թշնամական քայլ:**

**Հայոց ցեղասպանությունը եւ դրա ժխտումը վաղուց արդեն դարձել են անարդարության եւ անիրավության խորհրդանիշ: Ֆրանսիայի Հանրապետության դիրքորոշումը եւ Սենատի որոշումը անգնահատելի ավանդ կներդնեն պատմական արդարության վերականգնման եւ ապագայում նման ոճիրների կանխման գործում:**

**Մենք պատշաճն ենք հատուցում ֆրանսիական ժողովրդին, որը միշտ ակտիվորեն հանդես է գալիս արդարության իդեալների հաստատման, երկրի վրա համաձայնության ու խաղաղության պահպանման օգտին»:**

*Տես էջ 2*

# Ապրիլի 24-ը՝ բրազիլիական Կամպինասում «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր»

**Բրազիլիայի Սան Պաուլո նահանգի Կամպինաս քաղաքի քաղաքապետարանը պաշտոնապես տեղեկացրել է Բրազիլիայում Հայաստանի դեսպանությանը, որ դեկտեմբերի 16-ին 1,2 մլն բնակչությամբ եւ փոքրաթիվ հայկական համայնքով Կամպինասի քաղաքապետ Դ. Վիլագրան ստորագրել է քաղաքային խորհրդարանի նոյեմբերի 20-ին ընդունած բանաձեւը՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ:**

**Ինչպես տեղեկացնում է ՀՀ արտգործնախարարությունը, Կամպինասի քաղաքապետի հաստատումից եւ դեկտեմբերի 19-ին «Դիարիո օֆիսիալ» պաշտոնաթերթում հրապարակվելուց հետո բանաձեւը ստացել է օրենքի ուժ, համաձայն որի ապրիլի 24-ը կմտցվի քաղաքի հիշարժան տարեթվերի օրացույցի մեջ եւ յուրաքանչյուր տարի կնշվի որպես «1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:**

Ա. Հ.

# Ֆասիեի հրաժեշտի ռուսերենն ու աշխարհագրությունը




«Մենք չգտանք այն ուղին, որով Լեռնային Ղարաբաղի ժողովրդին հնարավորություն կտրվի մասնակցելու իրենց ապագային առնչվող քննարկումներին», երեկ Երեւան հրաժեշտի այցելությանը՝ լրագրողների հետ հանդիպմանն ասաց ԵԱՀԿ Մինսկի խմբի արդեն նախկին համանախագահ Բեռնար Ֆասիեն:

Նախ համանախագահը նախընտրեց խոսել ռուսերեն՝ իբր ժամանակ խնայելու համար, սակայն համանախագահի ռուսերենի իմացությամբ առավել շատ ժամանակ վատնվեց այն բոլոր տեսակետների գրեթե նույնությամբ կրկնությանը, ինչ Ֆասիեն Բաքվում հրաժեշտի հանդիպմանն արդեն ասել էր: «**Ազգն**» արդեն ներկայացրել է Բաքվում Ֆասիեի արած դատողությունները, ուստի դրանցից միայն նշենք, որ անդրադառնալով Փարիզում «Օկուպացիայի առումով Ադրբեջանի ցավը» հասկանալուն, ֆրանսիացի դիվանագետը շեշտեց, թե «արվել է իր խոսքերի հիմար մեկնաբանություն»: Ըստ այդմ, Ֆասիեն իր խոսքերով նկատի է ունեցել, որ թեեւ ֆրանսիացիները գերմանական օկուպացիայից կարողացել են վերադարձնել որոշ հողեր, «գինը դրա համար շատ բարձր է եղել», նկատի ունենալով մարդկային զոհերը:

«Ես դա ասացի, որ ցույց տամ, թե պատերազմը, նույնիսկ Ադրբեջանի համար, բանական, խելացի որոշում չէ... Պատերազմը սարսափ է, արյունահեղություն, ատելություն եւ հանուն ինչի՞...», պարզաբանեց Ֆասիեն, հիշեցնելով, որ ամեն դեպքում աշխարհագրությունը չես փոխի, հատկապես երբ Ֆասիեն աշխարհագրությանը տիրապետում է այնպես, ինչպես ռուսերենին. Ֆասիեի համար «Ղարաբաղը Ադրբեջանի մեջտեղում է»:

Ինչ վերաբերում է ապագային, ապա ֆրանսիացի դիվանագետը հույս հայտնեց, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում կլինի մի քանի ամսից:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատվիրակությունը ձեռնունայն է վերադարձել Փարիզից

**Փարիզից վերադարձել է Թուրք գործարարների միության պատվիրակությունը եւ իսկույն հանդիպել վարչապետ Էրդողանին՝ իրազեկելու իրենց փարիզյան գործունեության մասին: Դա ամենեւին էլ հուսադրող չի եղել Թուրքիայի համար, այլապես Թուրք արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ տկն Բոյները ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի քվեարկությունը Ֆրանսիայի Ազգային ժողովում չէր համարի Ֆրանսիայի լուրջ սխալը:**

**Ինչ վերաբերում է ֆրանսիական ապրանքներին, դրա առնչությամբ էր Բոյներն ասել է. «Մեր օրակարգում բոյկոտի խնդիր չկա: Բոյկոտելու քաղաքականությունը չի կարող հարատեւ լինել: Ավելին, կարող է երկրում բացասաբար անդրադառնալ աշխատատեղերի բացման վրա»: Ֆրանսիական օրինագծի առումով հոռետես էր նաեւ Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատվիրակության ղեկավար Բոզքըրը, ուստի թուրքական հանրային էկրանից ասաց, որ դա, ամենայն հավանականությամբ, կհաստատվի Ֆրանսիայի Ազգային մեծ ժողովում, որովհետեւ քվեարկության խափանումն անհնար է թվում:**

**Օգտվելով առիթից, նշենք, որ այսօր Ֆրանսիայի Ազգային ժողովի առջեւ նախատեսվում է բողոքի ցույց, որին ենթադրաբար կմասնակցեն շուրջ 20 հազար ֆրանսաբնակ թուրքեր:**

Հ. Չ.

# Ադրբեջանական սխտորը, հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական տնտեսական հարաբերությունները

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ադրբեջանական սխտորի հայտնվելը Երեւանի խանութներում հասարակական լայն հնչեղություն ստացավ, ինչը դրական պետք է համարել: Քանի դեռ հարեւան երկրում հակահայկական հիստերիա է տարածվում պետական մակարդակով, ամեն վտանգ կարելի է սպասել այդ երկրից եւ այդ ժողովրդից: Այսինքն, ադրբեջանական սխտորի Երեւանում վաճառվելն իսկապես ազգային անվտանգության ոլորտից է:

Ինչ վերաբերում է հարցի տնտեսական կողմին, ապա այս առումով նույնպես անընդունելի է Ադրբեջանից որեւէ ապրանք ներմուծելը, քանի դեռ այդ երկրում արգելվում է հայկական ապրանքների վաճառքը, ինչի մասին տեղեկություններ են հրապարակվել նաեւ մեր թերթում:

Ընդհանրապես, մինչ ղարաբաղյան հարցի կարգավորումը հայ-ադրբեջանական տնտեսական հարաբերությունների հաստատումը հնարավոր է, եթե նման ցանկություն դրսեւորվի Ադրբեջանի կողմից: Սակայն այդ երկիրը դարձյալ ոչ միայն նման ցանկություն չունի, այլեւ շրջափակման է ենթարկել Հայաստանին, դրդելով, որ Թուրքիան եւս նույնն անի: Ավելին, Ադրբեջանը կատաղորեն դեմ է հանդես գալիս Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների որեւէ բարելավման: Ի դեպ, բավականին հետաքրքրական են Թուրքիայի եւ Հայաստանի առեւտրատնտեսական հարաբերությունների տրամաբանությունը եւ մեր պետության որդեգրած մոտեցումը դրանց նկատմամբ:

Հայաստան-Թուրքիա քաղաքական հարաբերություններ այս պահին չկան, տնտեսական հարաբերություններն էլ միակողմանի են: Այսինքն, կա Թուրքիայից Հայաստան ներմուծում, բայց չկա Հայաստանից Թուրքիա արտահանում: Երբ որոշ «լիբերալներ» սկսում են ծաղրել հայաստանյան այն քաղաքական ուժերին, գործիչներին կամ սովորական մարդկանց, որոնք կոչ են անում իրենց հայրենակիցներին Թուրքիայում իրենց հանգիստը չանցկացնել կամ թուրքական ապրանք չգնել, հարկ է, որ այդ մասին չմոռանան: Ավելին, հարկ է, որ թուրքական ապրանքների նկատմամբ պետական քաղաքականությունն էլ համարժեք լինի մեր նկատմամբ վարվող քաղաքականությանը:

Բանն այն է, որ Թուրքիայում հայկական արտադրության ապրանքների նկատմամբ մեծ մաքսատուրքեր են դրված, ինչն անիմաստ է դարձնում Հայաստանից դրանց արտահանումն այդ երկիր:

*Տես էջ 8*

## Ընթացիկ

# «Օրինագիծը խոսքի ազատությունը սահմանափակող անաչառ գիտական ուսումնասիրությունն արգելող զրպարտություն է»

*Հայտարարել է Թուրքիայի նախագահ Գյուլը՝ հակասելով ինքն իրեն, նաեւ թուրքական ժխտողականությանը*

Այսօր, Ֆրանսիայի Ազգային ժողովի լիագումար նիստում քվեարկության կդրվի Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը: Այս փաստը անկախ արդյունքներից, ի չիք է դարձնում քվեարկությունը կանխելու թուրքական ձեռնարկումները: Ձեռնարկումների պարագայում, խոսքն առաջին հերթին վերաբերում է Մեջլիսի նախագահ Ջեմիլ Չիչեքի՝ Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահին, իսկ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ հանրապետության նախագահին հասցեագրած նամակներին:

Թեեւ այս երկու նամակները նպատակին չեն ծառայել, ավելին՝ Փարիզից ձեռնունայն են վերադարձել Թուրքիայի խորհրդարանի եւ գործարար շրջանակների պատվիրակությունները, բայց եւ այնպես, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի հետ հեռախոսակապ հաստատելու եռօրյա ապարդյուն փորձերից հետո հայտարարությամբ հանդես է եկել նաեւ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը:

Այսինքն՝ Գյուլի հայտարարությունն անմիջականորեն պայմանավորված էր հեռախոսազրույցից Սարկոզիի խուսափելու հետ, որի առնչությամբ Թուրքիայի նախագահի գլխավոր խորհրդական Ահմեդ Սեւերը հայտարարել է. «Սարկոզիի հետ հեռախոսազրույց ունենալու մեր նախագահի պահանջը դեռ երեք օր առաջ հայտնել ենք Ելիսեյան պալատ: Հորինելով տարբեր պատրվակներ, հրաժարվեցին կատարել մեր պահանջը: Երբ Սարկոզին խուսափեց հեռախոսազրույցից, մեր նախագահը հանդես եկավ հայտարարությամբ»:

Այդ հայտարարությունը, թուրքական լրատվամիջոցների վկայությամբ, Գյուլը արել էր դեկտեմբերի 20-ին, որտեղ նա ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը համարում է Թուրքիայի եւ թուրք ժողովրդի դեմ ուղղված անհիմն զրպարտություն, որն, իբր ոտնահարում է խոսքի ազատությունն ու հանգեցնում պատմության քաղաքական նպատակներով նենգափոխմանը, ուստի եւ չի կարող ընդունելի լինել:

Այնուհետեւ Աբդուլլահ Գյուլը ցանկություն է հայտնել, որ Ֆրանսիայում «խոսքի ազատությունը սահմանափակող, ինչպես նաեւ անաչառ գիտական ուսումնասիրությունը կանխարգելող» այս օրինագիծը դուրս մղվի Ֆրանսիայի Ազգային ժողովի օրակարգից, թողնելու համար պատմությունը պատմաբանների հայեցողությանը:

Թեեւ Աբդուլլահ Գյուլն, ի տարբերություն Մեջլիսի նախագահ Չիչեքի եւ վարչապետ Էրդողանի, հայտարարության մեջ չի արտահայտվել Թուրքիայի պատմության հետ ցեղասպանության անհամատեղելիության մասին, սակայն նա էլ անհիմն զրպարտություն է համարել օրինագիծը, ընդգծելով, որ դա կանխարգելում է հարցի անաչառ գիտական ուսումնասիրությունը: Քանի որ անհիմն զրպարտությունները ուսումնասիրություն, այն էլ անաչառ գիտական, չեն ենթադրում, ուստի Գյուլը դրանով հակասում է ինքն իրեն, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության Թուրքիայի պաշտոնական թեզին՝ ժխտողականությանը:

Խնդիրը, սակայն, Գյուլի մտքերի հակասականությունը չէ միայն, այլ այն հարվածը, որն օրինագիծը հասցնում է թուրքական ժխտողականությանը: Քանի որ օրինագիծը քրեականացնում է ժխտումը, ուստի դրանով հարվածի տակ է հայտնվում նաեւ ցեղասպանության Թուրքիայի պաշտոնական թեզը: Այս պայմաններում ինքնաբերաբար սահմանափակվում են սեփական թեզը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դրսեւորումներին հակադրելու եւ դա որպես հակակշիռ օգտագործելու Թուրքիայի հնարավորությունները:

Ակնհայտ է, որ հակակշռի բացակայությունն ինքնին ճանաչման գործընթացի խթանում է նշանակում, միաժամանակ եւ խրախուսում այն երկրներին, որոնք դեռեւս չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Ազգային արխիվից բոլորը գոհ են հեռացել

Ազգային արխիվի տնօրեն **Ամատունի Վիրաբյանը** 2011 թվականն արխիվի համար արդյունավետ տարի է համարում: Ասում է՝ տարվա ընթացքում իրենց դիմել է 25 հազար քաղաքացի, ու բոլորն էլ արխիվից գոհ են հեռացել, նույնիսկ նրանք, ում մերժել են: Այս տարի արխիվը ձեռք է բերել արխիվային նյութերը թվայնացնող 2 սարքավորում, որոնք բերվել են Գերմանիայից: Արխիվային փաստաթղթերի հիման վրա ազգային արխիվն այս տարի հասցրել է գրքեր տպագրել: Երեկ «Հայելի» ակումբում Ամատունի Վիրաբյանը տեղեկացրեց՝ մտադիր են Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ Ցեղասպանության թեմայով գրքեր հրատարակել: Դրանց շարքում կլինի «Վկայագրություն» ժողովածուն, որտեղ զետեղված են լինելու ականատեսների 700 հուշերը: «Վկայագրությունը» լույս կտեսնի մինչեւ 2015 թիվը՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն ու թուրքերեն լեզուներով:

Աշխարհի որեւէ արխիվում Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության մասին հնարավոր է նյութեր գտնել: Ամատունի Վիրաբյանն ընդգծում է՝ մեր մասին արխիվային ամենաշատ փաստաթղթերը պահպանվում են Վրաստանում: Եվ Ազգային արխիվը Վրաստանի հետ արդեն կնքել է համագործակցության պայմանագիր: Ընտրվել են Վրաստանի արխիվում պահպանվող 739 փաստաթուղթ, որոնք հայ մասնագետներն այսուհետեւ կարող են ուսումնասիրել: Պարոն




Վիրաբյանը նշում է՝ փաստաթղթերն ուսումնասիրելու համար Հայաստանի պետական բյուջեից հատկացված գումարը վրացական կողմին արդեն վճարել են: 739 փաստաթուղթը վերաբերում են 18-րդ դարի վերջին ու 19-րդ դարի սկզբին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած էթնիկ տեղաշարժերին:

Այս տարի Ազգային արխիվը ձեռք է բերել նաեւ 2 ուրիշ համաձայնություն, այս անգամ արդեն Ուկրաինայի ու Ռուսաստանի հետ: Համաձայն դրա՝ 2 երկրներում ու Հայաստանում կլինեն փաստաթղթերի ցուցահանդեսներ «Հայերը Ղրիմում» եւ «Հայերը Մոսկվայում» թեմաներով:

Ազգային արխիվի 2012-ի պլանները եւս սակավ չեն, իսկ խնդիրներից արխիվը նույնպես անմասն չէ: Խնդիրներից պարոն Վիրաբյանը նշեց աշխատողների ցածր աշխատավարձը՝ 50-60 հազար դրամ:

Ազգային արխիվը 350 աշխատող ունի, «Ու ոչ մի ազատ հաստիք», ավելացնում է տնօրենը: Իսկ որքա՞ն տոկոս է կազմում նրանց համակարգչային գրագիտությունը, պատասխանելով «**Ազգի**» այս հարցին՝ պարոն Վիրաբյանն ասում է. «Տեխնիկային բոլորը չեն տիրապետում, սակայն կարողանում ենք համատեղել երիտասարդների ու մեծահասակների փորձը»: Երիտասարդները թեեւ ունեն համակարգչային գիտելիքներ, բայց շատերը չեն կարողանում ընթերցել ձեռագրեր:

Մյուս բանախոսը Գրականության ինստիտուտի փոխտնօրեն **Վարդան Դեւրիկյանն** էր: Ե՛վ նա, և՛ Ամատունի Վիրաբյանը անդրադարձան լյուստրացիայի (գաղտնազերծման) մասին օրենսդրական նախաձեռնությանը, որն արդեն իսկ արժանացել է կառավարության բացասական վերաբերմունքին: Երկու բանախոսները եւս բացական վերաբերմունք ունեն նախաձեռնության հանդեպ: Ի. Պ.

ԸՄԲԵՐԱՆԻԶ ՊԱՏԱՍԽԱՆ

# Ֆրանսիացի նախարարի կոչը Թուրքիային՝ առերեսվելու իր պատմությանը

**«Բոլոր ժողովուրդները պետք է ողջամիտ լինեն եւ քաջություն ունենան առերեսվելու իրենց պատմությանը: Շուրջ 100 տարի առաջ կատարված Հայոց ցեղասպանությունը, որի պատասխանատուները մահացել են, ընդամենը պատմական իրողության ճանաչման խնդիր է, որը պետք է անի Թուրքիան», երեկ ֆրանսիական Radio Classizue-ին եւ Public Senat հեռուստաընկերությամբ այսպիսի կոչով է հանդես եկել Ֆրանսիայի պետական նախարար, արտաքին եւ եվրոպական գործերի նախարարին առընթեր եվրոպական հարցերով նախարար Ժան Լեոնետտին:**

**Լեոնետտին ժխտել է թուրքական կառավարական շրջանների այն տեսակետը, թե Ֆրանսիայի Սենատում այսօր քննարկվելիք Ցեղասպանության ժխտումը քրեորեն պատժելի դարձնող օրինագիծը նախընտրական նպատակների է ծառայում: «Այդ պարագայում ֆրանսիական ընդդիմությունը դեմ կքվեարկի օրինագծին», թուրքերին ուղղված իր խոսքը եզրափակել է Լեոնետտին:**

**Հիշեցնենք, որ անգամ Ֆրանսիայի նախագահական ընտրություններում ընդդիմադիր սոցիալիստ թեկնածու Ֆրանսուա Օլլանդը քանիցս հայտարարել է նշված օրինագծի ընդունման վերաբերյալ իր հետեւողականության մասին:**

Ա. Հ.

# Արա Աբրահամյանի դիմումը Ֆրանսիայի Սենատի նախագահ Ժան-Պիեռ Բելին

*1-ին էջից*

## Տեղեկանք

**Սենատում այսօրվա քննարկմանը նախորդել է Ազգային ժողովի իրավական հարցերի մշտական հանձնաժողովում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունումը:**

**Դրա հաստատման դեպքում Հայոց ցեղասպանության փաստը ժխտողներին Ֆրանսիայի տարածքում կսպառնան առնվազն 1 տարվա ազատազրկում եւ 45 հազար եվրո տուգանք:**

**2006 թ. հոկտեմբերի 16-ին Ազգային ժողովը հավանություն տվեց Հայոց ցեղասպանությունը քրեականացնող օրինագծին, սակայն դրա վերջնական ընդունման համար անհրաժեշտ է խորհրդարանի վերին պալատի՝ Սենատի հաստատումը:**

**Սենատը 2011 թ. մայիսյան նիստում 196 «դեմ» եւ 74 «կողմ» քվեներով մերժեց այդ օրինագիծը:**

**Պաշտոնական Անկարան բազմիցս հայտարարել է, որ տվյալ օրինագծի ընդունումը «անդառնալի հետեւանքներ կունենա» թուրք-ֆրանսիական հարաբերությունների համար:**

**Թուրքիայի վարչապետ Էրդողանը Ֆրանսիայի նախագահին հասցեագրված նամակում գրել է. «Ուզում եմ բացեիբաց հայտարարել, որ նման քայլերը շատ ծանր հետեւանքներ կունենան թուրք-ֆրանսիական քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերի համար, իսկ պատասխանատվությունը լիովին կընկնի այդ քայլը նախաձեռնողների վրա»:**

**Քվեարկության օրը՝ այսօր, Փարիզում սպասվում են թուրքական ազգայնական միությունների բողոքի ձեռնարկումներ:**

**Խորհրդարանի շենքի մոտ ձեռնարկում անցկացնելու մտադրություն են արտահայտել նաեւ Ֆրանսիայի հայ համայնքի ներկայացուցիչները:**

**Այս տարվա հոկտեմբերին Երեւանում իր պաշտոնական այցի ժամանակ ելույթ ունենալով՝ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին հայտարարեց. «Ժամանակակից պատմության առաջին ցեղասպանությունից անմիջապես հետո տասնյակհազարավոր հայեր ապաստան փնտրեցին Ֆրանսիայում: Եվ նրանք գտան երկրորդ հայրենիք, շարունակելով իրենց սրտում պահել Հայաստանը: Ֆրանսիան ճանաչեց մի ամբողջ ժողովրդի հանդեպ կայացած մահավճիռը, դա անվանելով այնպես, ինչպես պետք է կոչվի իրականում՝ ցեղասպանություն: Թուրքիան եւս պարտավոր է նայել իր պատմության դեմքին...»:**

# Հայաստանին՝ 40 մլն, Արցախին՝ մոտ 2մլն

**Հայաստանին ԱՄՆ աջակցության շրջանակներում 2012-ին կտրամադրվի 40 մլն դոլար, Ադրբեջանին՝ 16,1 մլն, իսկ Վրաստանին՝ 66 մլն: Ամերիկայի հայկական համագումարը տեղեկացնում է, որ ԱՄՆ Կոնգրեսը հաստատել է Հայաստանին տրամադրվող աջակցությունը, պահպանել Լեռնային Ղարաբաղին աջակցության նախկին ծավալները՝ մոտ 2 մլն դոլարի չափով ու Հայաստանի եւ Ադրբեջանի առումով ռազմական աջակցության հավասարակշռությունը՝ իր 2012-ի արտաքին աջակցության փաստաթղթում:**

**Աջակցության նշված ծավալները առաջարկվել են Բարաք Օբամայի կողմից, որոնք էլ հաստատել է ԱՄՆ Կոնգրեսը: Արտաքին աջակցության փաստաթղթին կից զեկույցում նշվում է, որ Սենատն ու Ներկայացուցիչների պալատը հասուկ նշում են արել, որ Հայաստանի եւ Ադրբեջանի առնչությամբ հարկ է հավասարակշռություն պահպանել ոչ միայն արտաքին ռազմական ֆինանսավորման, այլեւ միջազգային ռազմական կրթության եւ դասընթացների մակարդակներում:**

Ա. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Վանաձոր-Ֆիոլետովո երկաթգծի կառուցումը՝ մոտ 200 մլն դոլար

### *Տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանն ամփոփեց անցնող տարին*

Տարին ամփոփող մամուլի ասուլիսը երեկ տրանսպորտի եւ կապի նախարար **Մանուկ Վարդանյանը** սկսեց երկաթուղուց: Նա նշեց, որ «Հարավկովկասյան երկաթուղու» կոնցեսիոները ամբողջությամբ՝ 13,4 մլրդ դրամով կատարել է պարտավորությունները, իսկ նախարարությունը՝ վերահսկել կատարված աշխատանքները: Արագությունների բարձրացում, ենթակառուցվածքների զարգացում, ծառայությունների մատուցման կենտրոնի ստեղծում՝ մեկ պատուհան էլեկտրոնային համակարգի ներդրմամբ: Բացի վերոնշյալից, եկող տարի ձգտելու են ինտերնետի միջոցով տոմսերի գնման համակարգ գործարկել:



«Հայփոստի» վերաբերյալ Մանուկ Վարդանյանն ասաց, որ նախկինում էլ իր դժգոհությունն է հայտնել կառավարչից եւ նշել հավատարմագրային կառավարումը վարձակալությամբ փոխարինելու անհրաժեշտությունը: «Թեեւ նորոգվել եւ արդիականացվել են 103 փոստային բաժանմունքներ, բայց չպետք է մոռանալ, որ «Հայփոստը» 900 բաժանմունք ունի, որոնք պետք է արդիականացնել եւ հիմնանորոգել», ընդգծեց նախարարը:

Ճանապարհաշինական ծրագրերից տրանսպորտի եւ կապի նախարարը հիշատակեց պետական բյուջեից հատկացված 4 մլրդ դրամով 62 կմ ճանապարհների, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ 42 կմ ճանապարհների նորոգումը, 33,5 կմ երկարությամբ Ճամբարակի ճանապարհի նորոգումը եւ այլն: Հյուսիս-հարավ ճանապարհի Աշտարակ-Թալին, Երեւան-Աշտարակ, Երեւան-Արարատ հատվածների կառուցման համար ստացված հայտերը մանրամասն գնահատվել են եւ հաստատման նպատակով ուղարկվել Ասիական զարգացման բանկին:

«Զվարթնոց» օդանավակայանի հետ կապը պետք է լինի ոչ միայն տաքսիների միջոցով: Դեպի օդանավակայան երկաթուղային կապ պետք է լինի, որը կկառուցվի պետություն-մասնավոր համագործակցությամբ՝ «Ռուսական երկաթուղու» եւ «Զվարթնոցի» կոնցեսիոների մասնակցությամբ:

Անցնող տարվա ընթացքում կատարված քայլերից Մանուկ Վարդանյանը հիշատակեց նաեւ տաքսիներին լիցենզիաներ տրամադրելու համար 10 տարվա ժամկետային սահմանափակման վերացումը, լիցենզավորման գործընթացի հեշտացումը, ավտոմեքենաների տեխզննման կարգի պարզեցումը:

Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղու հատվածի կառուցման մասին տրված հարցին պատասխանելով՝ Մանուկ Վարդանյանը նախ ընդգծեց այդ երկաթգծի ռազմավարական կարեւորությունը, քանի որ 173 կմ-ով կարճացնում է ճանապարհը դեպի Վրաստան, ապա հայտնեց, որ նրա տեխնիկատնտեսական հիմնավորումն արդեն պատրաստ է: Շուտով այն կհաստատվի եւ կսկսվի նախագծի մշակումը: Նախնական գնահատականներով՝ երկաթուղու կառուցումը կարժենա մոտ 200 մլն դոլար, որը կներդնեն պետությունը եւ երկաթուղին: Միաժամանակ, նախարարը չբացառեց, որ երկաթուղու այս հատվածի կառուցումը կարող է ավելի էժան լինել տեղական հումք օգտագործելու դեպքում:

«Ավտոկայանի» փաթեթն արդեն պատրաստ է, ըստ որի ուղեւորափոխադրումների ամբողջ երթուղային ցանցը պետք է մշակի, մրցույթներն իրականացնի այդ կառույցը, կրելով նաեւ պատասխանատվությունը, ինչպես նաեւ արդիականացնի կայարաններն ու կարգավորման կետերը: Մանուկ Վարդանյանը հայտնեց, որ փոփոխություններ պետք է իրականացվեն նաեւ Երեւանի քաղաքային տրանսպորտում, որպեսզի մարզերից կայարաններ եկող ուղեւորներին մայրաքաղաքի կենտրոն տանող երթուղիներ լինեն: Այդ հարցը քննարկվում է Երեւանի քաղաքապետարանի հետ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Orange-ը մեկնարկում է համագործակցություն Գավառի պետական համալսարանի հետ

Orange-ը համագործակցության ծավալուն ծրագիր է սկսում Գավառի պետական համալսարանի հետ: Համալսարանի հետ կնքված համաձայնագրի շրջանակում Orange-ի՝ բարձր որակավորում ունեցող աշխատակիցները մասնագիտական եւ վերապատրաստման դասընթացներ կիրականացնեն ուսանողների համար, ինչպես նաեւ կներգրավվեն համալսարանի ուսումնական ծրագրի կազմման գործընթացին՝ որպես խորհրդատուներ:



«Գավառի համալսարանով մենք ամփոփում ենք 2011թ. կարեւոր փուլ, որի ընթացքում համագործակցություն սկսեցինք Հայաստանի 9 բուհերի հետ: Համագործակցության համաձայնագրերը նախատեսում են ինչպես գործատու-համալսարան սերտ կապեր՝ ուսանողներին ավելի հեշտությամբ աշխատանքային աշխարհ ընդունելու նպատակով, այլ նաեւ օգնություն լավագույն ուսանողներին, ովքեր դժվարանում են լուծել բարձրագույն կրթության ֆինանսական դժվարությունները: Ուրախությամբ եմ նշում, որ դրանց մեծ մասը մարզային համալսարաններ կամ մարզային մասնաճյուղեր են, քանի որ մարզերի ուսանողներն ավելի շատ կարիք ունեն մեր աջակցությանը՝ լավ կարիերա մեկնարկելու համար», ասաց Orange Արմենիա ընկերության գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Ընկերությունն իր բարեգործական կառույցի՝ Orange Հիմնադրամի միջոցով Գավառի համալսարանին փոխանցեց մեկ միլիոն դրամ, որը պետք է հատկացվի արդեն ընտրված 8 ուսանողների ուսման վարձի մարմանը: Ուսանողներն ընտրվել են համալսարանի առաջարկով՝ հիմնվելով երկու հիմնական չափանիշների վրա. ուսանողի ընտանիքի սոցիալական վիճակ եւ ուսանողի առաջադիմություն:

2011թ. երկրորդ կիսամյակի ընթացքում Orange-ը համագործակցության հուշագրեր ստորագրեց Հայաստանի 9 համալսարանների հետ՝ Երեւանի պետական համալսարան, Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի եւ վերջինիս մարզային մասնաճյուղերի հետ Գյումրիում, Վանաձորում եւ Կապանում, Գավառի պետական համալսարանի եւ Գորիսի պետական համալսարանի հետ:

Հուշագրերի շրջանակներում արդեն կազմակերպվել են մասնագիտական եւ վերապատրաստման դասընթացներ ուսանողների համար, իրականացվել են այցեր ընկերության տարբեր բաժիններ, ստեղծվեցին 4 Wi-Fi անկյուններ, որոնց շնորհիվ ուսանողներն ու դասախոսներն այսօր կարող են օգտվել իրենց բուհի ամենամարդաշատ վայրում տեղադրված անվճար Orange Wi-Fi ինտերնետից: Ընդհանուր հաշվով տրամադրվել է կրթաթոշակ 62 ուսանողի, հիմնականում՝ մարզային համալսարաններում:

## ԱՄՓՈՓԵՑԻՆ

# Տարին արդյունավետ էր ՀԱԿ-ի համար, կորսված՝ «Ժառանգության»

«Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը 2011-ը բնորոշում է կորսված տարի, որովհետեւ եւս մեկ տարով խնդիրների լուծման հնարավորությունը հետաձգվեց: Նրա մեկնաբանությամբ, ընտրական օրենսգիրքը չի համապատասխանում ժողովրդի սպասելիքներին, որովհետեւ չի կարողանալու վերացնել ընտրակեղծիքների հնարավորություն տվող սողանցքերը: Մարտիրոսյանը տարին կորսված է համարում նաեւ տնտեսության ներկայիս վիճակն ամփոփելիս: Այս ոլորտում էլ ուրախանալու ոչինչ չկա, քանի որ հրապարակվող գեղեցիկ ցուցանիշներին զուգահեռ չկա արդյունավետ տնտեսական քաղաքականություն: «Առաջին անհրաժեշտության ապրանքների գները գրեթե կրկնակի ավելացել են, եւ այդ ամենն աշխատավարձերը չբարձրացնելու պայմաններում: Ահա թե ինչու աղքատությունը պաշտոնապես 35 տոկոս է, ոչ պաշտոնապես՝ 60 տոկոս: Եթե սրան եք գումարում քաղաքացիների անվստահությունը վաղվա օրվա հանդեպ, ինչն էլ դառնում է արտագաղթի հիմք, ապա տեսնում ենք, որ չկա լավատեսության ոչ մի հիմք»:

Ներկայացնելով «Ժառանգության» կատարած քայլերը՝ Արմեն Մարտիրոսյանն առանձնացրեց Րաֆֆի Հովհաննիսյանի հացադուլն ու ընտրական օրենսգրքում փոփոխությունների հետ կապված որոշակի համաձայնությունը Դաշնակցության հետ: Ըստ պատգամավորի, անցնող տարում գրանցվեցին հաջողություններ, սակայն ոչ թե քաղաքական կամ տնտեսական դաշտում, այլ մարզական կյանքում:

Անցնող 2011-ը ամենաարդյունավետն էր ՀԱԿ-ի համար: ՀԱԿ համակարգող **Լեւոն Զուրաբյանի** ներկայացմամբ, այս տարի ընդդիմությունն անցկացրել է 22 համապետական միջոցառում՝ հանրահավաք, երթ եւ ութօրյա հանրահավաք:

ՀԱԿ-ի ձեռքբերումներից Զուրաբյանն առանձնացրեց Ազատության հրապարակի բաց լինելն ազատ հավաքների համար: «Մենք պարտադրեցինք իշխանություններին բաց թողնել բոլոր քաղբանտարկյալներին: Նրանց չհաջողվեց քաղբանտարկյալներին օգտագործել որպես ապրանք քաղաքական առեւտրի համար», ասաց ՀԱԿ-ի համակարգողը՝ հավելելով, որ կոնգրեսին հաջողվեց նաեւ իշխանություններին պարտադրել նստել բանակցային սեղանի շուրջը: Արդյունավետությանը զուգահեռ՝ ՀԱԿ-ում ցավում են, որ չեն կարողացել հասնել ամենամեծ նվաճմանը՝ սեփական իշխանությունը ընտրելու իրավունքին: ՀԱԿ-ում համոզված են, որ արտահերթ թե հերթական, իրենք հասնելու են Սերժ Սարգսյանի հրաժարականին: Իրենք 3 տարի սպասում են այդ օրվան, Ստալինը 4 տարի հայտարարում էր, որ հաղթելու է Հայրենական պատերազմն ու վերջիվերջո հաղթեց: ՀԱԿ-ը չի կասկածում, որ լրջագույն ճակատամարտը 2012-ին է լինելու, եւ ինչպես Ստալինը հաղթեց Հայրենական պատերազմը, այնպես էլ իրենք կհաղթեն Սերժ Սարգսյանին:

Ի դեպ, ՀԱԿ-ը եւ իրեն սպասարկող մամուլը մեկ անգամ չէ, որ Ս. Սարգսյանին նմանեցրել են Հիտլերին, սակայն առաջին անգամն է, որ Լ. Զուրաբյանը ՀԱԿ-ի ղեկավարին, փաստորեն նմանեցնում է Ստալինին...

Հ. Հ.

# Գագիկ Ծառուկյանը լուծարել է մշակույթի խորհուրդը, բայց 100 մլն դրամն էլի խոստանում է

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի մամուլի խոսնակ **Խաչիկ Գալստյանի** տարածած հայտարարության համաձայն՝ ԲՀԿ-ին կից մշակույթի աջակցման խորհուրդը լուծարվել է, քանի որ անցած ամիսների ընթացքում չի կարողացել գոնե մեկ ծրագրի հավանություն տալ, ինչի պատճառով որեւէ ծրագիր չի ֆինանսավորվել, այն դեպքում, երբ մեր երկրում բազմաթիվ մշակութային նախագծեր աջակցության կարիք ունեն: Գագիկ Ծառուկյանը դեռեւս հունիս ամսին հայտարարել էր մշակույթի աջակցման համար 100 մլն դրամ տրամադրելու իր որոշման մասին, ու մշակույթի աջակցման խորհուրդը ստեղծվել էր բարձր մասնագիտական մոտեցում ապահովելու եւ անաչառ մրցույթներ կազմակերպելու համար. «Ցավոք, անցած ամիսների ընթացքում խորհուրդը չկարողացավ գոնե մեկ ծրագրի հավանություն տալ, չֆինանսավորվեց ոչ մի ծրագիր, այն պայմաններում, երբ մեր երկրում բազմաթիվ մշակութային նախագծեր աջակցության կարիքն ունեն: Գագիկ Ծառուկյանի համար անընդունելի են տեխնիկական եւ այլ կարգի բացատրություններն ու արդարացումները», ասված է ԲՀԿ նախագահի մամուլի խոսնակի հայտարարության մեջ՝ միաժամանակ իրազեկելով, որ Գ. Ծառուկյանը վերահաստատում է 100 մլն դրամ մշակույթի աջակցմանը տրամադրելու որոշումը, անգամ պատրաստակամություն է հայտնում ավելացնել այդ գումարն անհրաժեշտության դեպքում: Մի խոսքով՝ առաջիկայում ծրագրերի ընտրության եւ նախագծերի ֆինանսավորման ողջ պատասխանատվությունը դրվում է «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի վրա: Թեեւ՝ Խ. Գալստյանը նշել է նաեւ, թե Գ. Ծառուկյանը շնորհակալություն է հայտնում լուծարված խորհրդի անդամներին, ովքեր այս ամիսներին ցուցաբերել են «մեծ պատասխանատվություն, ազնվություն եւ բարձր պրոֆեսիոնալիզմ եւ վստահություն է հայտնում, որ առաջիկայում կգտնվեն համագործակցության նոր, հետաքրքրական եզրեր՝ հանուն մեր երկրի, հանուն մշակույթի զարգացման»:

Մ. Խ.

# Քարաթափման վտանգ

Արտակարգ իրավիճակների ու տրանսպորտի եւ կապի նախարարությունները հայտարարում են, որ Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման ավտոճանապարհի 35-րդ կիլոմետրում կա քարաթափման վտանգ: Շինարարական աշխատանքներ կատարելու պատճառով 2011 թվականի դեկտեմբերի 21-ից 24-ը նշված տեղամասում գործելու է միայն մեկ երթեւեկամասը, իսկ դեկտեմբերի 24-ին՝ պայթեցման աշխատանքների իրականացման պատճառով, հիշյալ ճանապարհի 35-րդ կիլոմետրի նշված տեղամասը փակ է լինելու երթեւեկության համար: Տրանսպորտային միջոցների երթեւեկությունը կազմակերպվելու է շրջանցիկ Մ-6-Դսեղ-Մարց-Մ-6 ճանապարհով:

Խցանումներից խուսափելու նպատակով, խնդրում ենք ավտովարորդներին՝ այդ օրերին եւ հատկապես դեկտեմբերի 24-ին զերծ մնալ նշված տեղամասով երթեւեկելուց:

Ճանապարհի վերաբացման վերաբերյալ կհայտնվի լրացուցիչ:

## Զուգահեռներ

# Բնակչությունը՝ որպես զենք

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Բնակչության աճը բազմաթիվ ժողովուրդների համար ռազմավարական հզոր զենք է: Եվրոպական երկրներն արդեն երկար ժամանակ է, ինչ որդեգրել են ծննդաբերությունը խթանելու ծրագրեր, որպեսզի կարողանան պայքարել բնակչության նվազման դեմ: Ֆրանսիան, հատկապես, չափազանց «առատաձեռն» նման մի ծրագիր որդեգրել է վաղուց, սակայն Հյուսիսային Աֆրիկայի ֆրանսիական նախկին գաղութներից ներգաղթողների մեծ հոսքի հետեւանքով այդ ծրագրից ավելի շատ օգտվել են վերջիններս, քան բնիկ ֆրանսիացիները:

Հիմա եվրոպական մի շարք երկրներում էլ են գործում ծննդաբերությունը խթանելու նմանօրինակ ծրագրեր: Քաղաքագետներն իրենց մտահոգությունն են արտահայտում այն հարցի առնչությամբ, որ առաջիկա 50 տարիների ընթացքում մահմեդականները բնակչության մեծամասնությունն են կազմելու եվրոպական մայրցամաքում:

Նախկին Խորհրդային Միությունն էլ ուներ նման մի ծրագիր՝ բազմազավակ մայրերին «հերոսի» կոչում էին շնորհում: Բայց այնտեղ էլ դրանից ավելի շատ օգտվում էր մահմեդական ազգաբնակչությունը: Խորհրդային Հայաստանում նման կոչման արժանացած մայրերի մեծ մասը քրդեր էին եւ ազերիներ:

Մյուս կողմից՝ Չինաստանն իր 1,5 միլիարդից ավելի բնակչությամբ հակառակ քաղաքականությունն է վարում: Ընտանիքներին չի խրախուսում ունենալ երկուսից ավելի զավակ: Չինաստանը հզոր տնտեսական գերտերություն է, որն արագ տեմպերով զարգանում է, եւ բնակչության աճի վերահսկողության ծրագիրը նպատակ է հետապնդում համապատասխանեցնել ծնելիությունը երկրի տնտեսական զարգացմանը: Բնակչության չվերահսկված աճը կարող է խոչընդոտել տնտեսական աճին:

Հայաստանում գործում է կիսակատար մի ծրագիր, որն այնքան էլ չի նպաստում ծնելիության աճին, որովհետեւ չկան համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք կապահովեին նպատակադրված աճը: Սոցիալական ուսումնասիրությունները Հայաստանում ցույց են տալիս, որ նորաստեղծ ընտանիքները չեն ցանկանում զավակներ ունենալ՝ տնտեսական խնդիրների եւ երիտասարդությանը սպասող անորոշ ապագայի պատճառներով: Եթե Հայաստանը մի օր կարողանա ուժեղ տնտեսություն ունենալ, որն իր քաղաքացիներին հետ կպահի այլ երկրներ գաղթելու գայթակղությունից, ապա այդ ժամանակ կկարողանա օգտվել բեղմնավորման կլինիկաներից, որպեսզի ավելացնի իր բնակչության թվաքանակը:

Մահմեդական երկրներում բազմակնությունը սովորական երեւույթ է, որն զգալիորեն նպաստում է բնակչության աճին: Թուրքիայի բնակչությունն, օրինակ, չափազանց արագ տեմպերով աճելով այժմ կազմում է ավելի քան 70 միլիոն: Դրան զուգահեռ տնտեսական զարգացումը արդարացրել է բնակչության այդ աճը, չնայած այդ 70 միլիոնից 20 միլիոնը քրդեր են, որոնք վերջին տարիներին առավել գիտակցորեն են պաշտպանում իրենց էթնիկական ինքնությունը:

Մյուս կողմից՝ Եգիպտոսի գերբնակեցումը դարձել է ազգային աղետ, որովհետեւ երկրի տնտեսությունը համաչափ զարգացում չապրեց: Ընտանիքի ծրագրման կամ ծնելիության սահմանափակման խնդիրը կամավոր է Եգիպտոսի քաղաքացիների շրջանում եւ չի խրախուսվում կրոնական իշխանությունների կողմից: «Մուսուլման եղբայրների» քաղաքական ասպարեզ մուտք գործելու ներկա իրադրությամբ այդ խնդիրը հավանաբար ավելի է սրվելու, քանի որ արմատական այդ կուսակցությունը փորձելու է երկրում պարտադրել շարիաթի օրենքը:

Իր դեկտեմբերի 10-ի համարում «Նյու Յորք թայմսը» «Ազգային արգանդը» (The National Womb) խորագրի ներքո անդրադարձել էր Լեռնային Ղարաբաղի բնակչության խնդրին: Հոդվածը տեղեկացնում էր բնակչության աճը խրախուսելու կառավարության նոր ծրագրի մասին: Գաղտնիք չէ, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության էթնիկական պատկերը շատ ավելի կրիտիկական վիճակում է, քան երկրի տնտեսության եւ քաղաքականության պատկերները: Այդ փոքրիկ հանրապետության ապագան կախված է իր բնակչության թվաքանակի պահպանման եւ ավելացման գործընթացից: «Թայմսը» որոշ վիճակագրական տվյալներ էր հրատարակել, որոնք, մեղմ ասած, այնքան էլ մխիթարական չեն: «Չորս տարի առաջ իր սկզբնավորման թվականից ի վեր ծնունդների թիվը 2010 թվականի վերջում կազմել է 2,694, համեմատած 2007-ի 2,145-ի հետ: Խրախուսման այդ ծրագիրը ամուսնացող յուրաքանչյուր զույգին 780 դոլար է տրամադրում սկզբում, իսկ այնուհետեւ՝ 260, 520, 1.300 եւ 1.820 դոլար համապատասխանաբար առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ զավակների համար: Տասնութ տարեկանից ներքեւ 6 եւ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին կառավարությունը տուն է տրամադրում: Իհարկե, այս պարգեւները բավական պատկառելի են մի երկրի համար, որտեղ ամսական միջին աշխատավարձը 100 դոլար է»:

Վերոնշյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ բնակչության աճը կրիայի քայլերով է առաջ գնում: Ընդամենը չնչին հավելում երեք տարվա ընթացքում, մինչդեռ Ղարաբաղի ապագան հենց բնակչության աճից է կախված:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ Մինսկի խմբի հովանավորությամբ ընթացող գրեթե բոլոր բանակցություններում շոշափվել եւ շոշափվում է հանրաքվեի հարցը: Ադրբեջանը պնդում է, որ Ղարաբաղի հայ բնակչության հետ մեկտեղ Ադրբեջանի 7 միլիոնանոց բնակչությունը նույնպես պետք է մասնակցի Ղարաբաղի հետագա կարգավիճակը որոշելու համար անցկացվելիք ազգային հանրաքվեին: Նման «սցենարի» կիրառման դեպքում արդյունքը, կարծում ենք, պարզ կլինի եւ անշուշտ ոչ դրական:

Հայկական կողմը պնդում է, որ հանրաքվեն պետք է անցկացվի միայն Ղարաբաղի ներսում, Ղարաբաղի բնակչության մասնակցությամբ: Այս դեպքում էլ արդյունքը շատ պարզ կլինի ու կանխատեսելի, բայց կա նաեւ մի ներհատուկ վտանգ: Եթե Ղարաբաղից հեռացած ազերիները վերադառնան եւ ցանկանան մասնակցել հանրաքվեին, ապա պատկերը ամբողջովին կփոխվի: Նրանց թիվը վտանգավորության աստիճանի աճած պետք է լինի, քանի որ նույնիսկ փախստականների ճամբարներում նրանք ավելի արագ են աճում, քան հայերը, չխոսելով դեռ այն հայ երիտասարդների մասին, որոնք օտար երկրներ են մեկնում աշխատանք որոնելու եւ ապրուստ վաստակելու նպատակով:

1948-ի անկախացումից ի վեր Իսրայելի հրեա ժողովրդի թիվը բացառիկ արագությամբ աճ արձանագրեց, փորձելով գերազանցել պաղեստինցիների թվաքանակը, հատկապես աջթեւայինների, կրոնական անհանդուրժողականություն ցուցաբերողների շրջանում, որոնք ի հեճուկս պատերազմի եւ շրջափակված լինելու մտայնության, ցանկանում են հաստատվել պաղեստինյան տարածքներում: Նրանց, անշուշտ, օգնում են Մ. Նահանգների հարկատուներից հոսող դոլարները: Բայց հակառակ հրեաների աճին, Իսրայելի եւ գրավյալ տարածքների ներսում պաղեստինցիների աճը լուրջ ժողովրդագրական խնդիրներ է առաջացնում Իսրայելի ապագայի համար: Ահա թե ինչու որոշ ծայրահեղական խմբավորումներ Իսրայելում պահանջում են, որ բոլոր պաղեստինցիները արտաքսվեն Հորդանան: Այնպես որ, հակառակ նյութական եւ ռազմական հսկայական ներհոսքի, Իսրայելը դեռեւս գտնվում է ժողովրդագրական սպառնալիքի ներքո:

Այս հանգամանքն էլ մեզ ստիպում է վերադառնալ մեր խնդիրներին՝ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում: Ովքե՞ր են մեզ նեցուկ կանգնելու: Որտեղի՞ց է գալու օժանդակությունը:

«Թայմսը» տխուր հեռանկար է կանխատեսում ծնունդները խթանելու վերոնշյալ ծրագրի համար, նշելով. «Մի տարածաշրջանում, որտեղ տնտեսությունը կաղում է, արդյո՞ք միակ լուծումը ծնելիության աճն է: Առանց նախ կատարելագործելու կրթական, ենթակառուցվածքների եւ աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները ապագա սերունդների համար եւ բարելավելու մարդկանց կենսամակարդակը, այսօրվա ծրագրի հետեւանքով ծնված երեխաները կարող են մեծանալով նույնպես օտար ափերում որոնել ավելի բարեկեցիկ կյանք, ինչպես այսօրվա երիտասարդները»:

Ղարաբաղի բնակչությունն իր հերոսությունն ու հայրենասիրությունը ցուցաբերեց պատերազմում պարտության մատնելով թշնամուն, բայց հերոսությունն ու հայրենասիրությունը բավարար չեն խաղաղությունն ու երկրի ապագան պաշտպանելու համար: Անհրաժեշտ են առավել շոշափելի միջոցառումներ:

**Դետրոյթ, ԱՄՆ**
**Թարգմ.՝ Հ. Ծ.**

# Հիմարության վերջին ճիչը

«Ադրբեջանը մտադիր է Հայաստանին դատի տալ»: Սենսացիոն հայտարարության հեղինակը հարեւան երկրի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, խորհրդարանի պատգամավոր Յագուբ Մամեդովն է: Ըստ նրա՝ «հաջողվել է բացահայտել մի շարք կարեւոր փաստաթղթեր, որոնց հիման վրա դատախազությունը քրեական գործ է հարուցել եւ նախաքննությունն է տանում»: Իսկ Ադրբեջանը «Հաագայի դատարան կդիմի, երբ դատախազությունն ի մի բերի նյութերը եւ մեղադրանք առաջադրի»:

Այս կարգի բամբառակություններին կարելի է եւ ուշադրություն չդարձնել: Բայց «պատմաբան» եւ խորհրդարանական Յագուբ Մամեդովի ասածն իրոք որ բացառիկ հիմարություն է: Քանի որ, դատելով նրա հետագա «մեկնաբանություններից», Ադրբեջանը մտադիր է որպես «գլխավոր մեղադրյալի» ներկայացնել... Ստեփան Շահումյանին:

Այո, Բաքվի կոմունայի ղեկավարին, ում մահվան 100-ամյակը կլրանա 2018 թվականին: Այդ դեռ ոչինչ. «հանցագործին կարելի է դատել նաեւ հետմահու, եթե նրա մեղքն ապացուցվի»: Բայց ի՞նչ կապ ունի ներկայիս Հայաստանի Հանրապետությունը Ստեփան Շահումյանի եւ գրեթե մեկդարյա վաղեմության իրադարձությունների հետ:

Չէ՞ որ դեպքերը տեղի են ունեցել 1918 թ. մարտին, երբ ոչ Հայաստանն էր անկախ, ոչ էլ Ադրբեջանը: Իսկ Ստեփան Շահումյանը Բաքվում ներկայացնում էր Ռուսաստանի բոլշեւիկյան իշխանություններին: Իրադարձությունների պատմաքաղաքական գնահատականը տրված է բազմաթիվ ուսումնասիրողների կողմից. 1918 թ. մարտի վերջին օրերին «Մուսավաթ» կուսակցության զինյալ խմբավորումները Բաքվում փորձել են տապալել բոլշեւիկյան իշխանությունը, տեղի են ունեցել քաղաքացիական բախումներ, որոնց ընթացքում երկու կողմերն էլ զոհեր են տվել: Ավելին, շնորհիվ Բաքվի հայկական կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների, հաջողվել է բախումների գոտուց դուրս բերել հազարավոր խաղաղ մարդկանց եւ փրկել նրանց կյանքը:

Ի՞նչ է կատարվել այդուհետեւ: Մի բառով ասած՝ պետական հանցագործություն: Խոսքն այն մասին է, որ նույն թվականի սեպտեմբերի 15-ին օսմանյան Թուրքիայի էքսպեդիցիոն կորպուսը, որի հրամանատարը ռազմական նախարար Էնվերի հարազատ եղբայր Նուրի փաշան էր, օկուպացրել է Բաքու քաղաքը: Ավելի քան 30 000 հայ սպանվել է, մյուսները՝ բռնատեղահանվել: Ահա այդ սոսկալի ոճրագործության հետքերը քողարկելու նպատակով էլ Ադրբեջանի «դեմոկրատական հանրապետության կառավարությունը» մարտյան իրադարձություններից կես տարի անց «անցկացրել է հետաքննություն եւ պարզել, որ մուսուլմանները հայկական զինված խմբավորումների կողմից ենթարկվել են բռնությունների»:

Եվ այդ «փաստաթղթի հիման վրա» էլ դեպքերից 80 տարի անց՝ 1998 թ. մարտի 30-ին Հեյդար Ալիեւը հրամանագիր է ստորագրել եւ կատարվածը «սահմանել որպես ադրբեջանական ժողովրդի ցեղասպանություն»: Իսկ այսօր Յագուբ Մամեդովը «պահանջում է, որ մեղավորները պատասխան տան Հաագայի միջազգային դատարանի առաջ»:

Զուտ իրավական առումով, իհարկե, նա հիմարություն է ասում: Բայց սա երեւի այն դեպքն է, երբ ադրբեջանական կողմը մեզ «հուշում է» մեր անելիքը. արդյոք ժամանա՞կը չէ, որ մենք իրոք դիմենք միջազգային դատարան եւ պատասխանատվություն պահանջենք Սումգայիթի, Բաքվի ջարդերի համար: Չէ՞ որ դրանց կազմակերպիչներն ու իրականացնողները մեծ մասամբ դեռ կենդանի են: Ապրում են նաեւ այդ դժոխքից փրկվածները:

Այդ դեպքում, թերեւս, Յագուբ Մամեդովն ու նրա պատվիրատուները կզրկվեին պատմությունը խեղաթյուրելու հնարավորությունից: Թե չէ ստացվում է, որ հայկական կողմի արժանապատիվ կեցվածքը ոմանց Ադրբեջանում եւ Թուրքիայում մղում է բոլորովին այլ որակի ձեռնարկումների: Թուրքական լրատվամիջոցներին հղում անելով՝ Բաքվի կայքէջերից մեկն օրերս գրել էր, թե «ստորագրահավաք է սկսվել Ռամիլ Սաֆարովին ազատելու հարցով»: Եվ գիտե՞ք ինչ «համեմատություն» են արել նախաձեռնողները: Ապշեցուցիչ է, բայց՝ փաստ. նրանք կարծում են, որ «եթե Թալեաթին սպանող Սողոմոն Թեհլերյանը մեկ օր անգամ բանտ չի նստել, ապա ինչո՞ւ պիտի Ռամիլ Սաֆարովը ցմահ ազատազրկվի»:

Իսկ խոսքը քնած հայ սպային կացնահարած «մսագործի» մասին է:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Ցեղասպանության հարցով բանավեճ Թուրքիայի Ազգային մեծ ժողովում

## «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը հրաժարվել է ստորագրել օրինագիծը դատապարտող հայտարարությունը

Երեկ այդ մասին նշել էին թուրքական հանրային հեռուստատեսությունն ու թերթերը, մասնավորապես՝ «Թարաֆը»: Բանավեճը տեղի է ունեցել դեկտեմբերի 19-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պետբյուջեի քննարկումներին նվիրված նիստում, երբ ամբիոն է բարձրացել երկրում քրդերի իրավունքները պաշտպանող «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավոր Սըրրը Սաքըքը:

«Թարաֆի» վկայությամբ՝ Սաքըքն ասել է. «Դեկտեմբերի 19-ին երկիրն ականատես եղավ երկու կոտորածի... մեկը 1978-ին իրականացվել էր Մարաշում, որի հետեւանքով սպանվեցին հարյուրավոր մարդիկ... Արդեն մենք ունենք անցյալից եկող կոտորածի ավանդույթ. 1915-ին հայերի, ապա հրեաների եւ քրդերի դեմ իրականացված բռնատիրական քաղաքականություն...»:

Նրան առարկել է «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության խմբակցության փոխնախագահի Նուրեթդին Ջանիքլին, թե «կոտորածի ավանդույթ» արտահայտությունը սխալ է: Սաքըքն իսկույն հակադարձել է. «Կնշանակի դուք տեղյակ չեք պատմությանը: Լավ կլիներ առերեսվեիք պատմության հետ»: Բանավեճին միջամտել է Մեջլիսի փոխնախագահի տիկին Գյուլդալ Մումջուն, որը նիստն էր վարում, ասելով. «Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ նման բան չի եղել: Հայերի, հրեաների դեմ իրագործված ցեղասպանությունից եք խոսում: Խնդրում եմ...»:

Սաքըքը պատասխանել է. «Ոչ թե ես եմ խոսում, այլ ասում է պատմությունը: Ճշմարիտ պատմությունից ինչո՞ւ եք անհանգստանում: Ձեր ելակետը կիսատ-պռատ պատմությունն է... Մի՞թե այդ նույն քաղաքականությունը չեք կիրառել քրդերի դեմ... Թե՞ կոտորածի ծրագիր չեք իրականացրել ընդդեմ ալավիների: Այս փաստերը բոլորին են հայտնի: Ինչո՞ւ եք ուրանում: Ինչո՞ւ եք պաշտպանում ջարդարարներին: Չէ՞ որ առերեսվելու էիք պատմության հետ...»:

Նրա խոսքերին, բացի Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավորներից, բուռն հակազդեցությամբ արձագանքել են նաեւ Ազգայնական շարժում եւ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության պատգամավորները: Այդ ընթացքում խոսք է վերցրել ֆինանսների նախարար Մեհմեդ Շիմշեքը եւ ասել. «Պատմության հետ առերեսվելը կնշանակի առերեսվել սեփական խղճի հետ: Խղճի տեր ոչ ոք չի կարող ասել, թե Թուրքիայում հայերի եւ հրեաների կոտորած է իրագործվել: Նման բան խնդրո առարկա չէ»:

Մեջլիսի դեկտեմբերի 19-ի նիստը վարող փոխնախագահ Մումջուն Ժողովրդա-հանրապետական կուսակցությունից է: Հաջորդ օրվա՝ դեկտեմբերի 20-ի նիստն էլ վարել է «Ազգայնական շարժում» կուսակցության ներկայացուցիչ Մերալ Աքշեները: Ի դեպ, 90-ականներին այս տիկինը զբաղեցնում էր Չիլլերի կառավարության ներքին գործերի նախարարի պաշտոնը, PKK-ականներին «հայի զավակ» էր բնութագրել: Այսինքն՝ հայատյացությունը խորթ չէ Մեջլիսի փոխնախագահ Աքշեներին:

Համենայն դեպս, դեկտեմբերի 20-ին Աքշեների նախագահությամբ Թուրքիայի ազգային մեծ ժողովը խորհրդարանական չորս կուսակցություններից 3-ի՝ «Արդարություն եւ բարգավաճում» «Ժողովրդա-հանրապետական» եւ «Ազգայնական շարժում» կուսակցությունների ստորագրությամբ ընդունել է հայտարարություն՝ դատապարտելով ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը:

Անձամբ փոխնախագահ Աքշեների ընթերցած հայտարարության մեջ ասված է. «Ահավոր է, անընդունելի եւ պատմական սխալ այսպես կոչված Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի քննարկումը Ֆրանսիայի Ազգային ժողովում: Խստագույնս դատապարտում ենք: Պատմական իրադարձությունները պետք է քննարկեն գիտնականները ու անկողմնակալ ուսումնասիրողները: 21-րդ դարում գիտության, խոսքի ազատության, մարդու իրավունքների համար չափազանց սարսափելի է, մտահոգիչ, նույնիսկ ամոթ, երբ եվրոպական երկրում փորձում են պատժել նրանց, ովքեր պատմական սուտը ժխտելու համարձակություն են դրսեւորում: Թուրքիայի ազգային մեծ ժողովը, դատապարտելով միտումնավոր, հանիրավի, չարամիտ այդ նախաձեռնությունը, պատմական այս սխալից հետ կանգնելու կոչ է անում Ֆրանսիայի Ազգային ժողովին, որպեսզի կատարի իր պատասխանատվությունը պատմության առջեւ»:

«Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը եթե չի ստորագրել հայտարարությունը, կուսակցության պատգամավորներն էլ հայտարարության տեքստի ընթերցման պահին Մեջլիսում լքել են նիստերի դահլիճը: Այլ կերպ, որքան էլ թուրքական լրատվամիջոցները փորձեն հայտարարությունը վերագրել Թուրքիայի խորհրդարանին, իրականում դա խորհրդարանական երեք կուսակցություններինն է, իսկ չորրորդը՝ չմիանալով մյուսներին, խախտել է քաղաքական բոլոր ուժերի համար ժխտողականության ընդհանրության ավանդույթը Թուրքիայում: Թերեւս դրանով էլ ճեղքվածք է տվել ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականությունը:

Խնդիրը, սակայն, սոսկ ստորագրելուց հրաժարվելը չէ, այլ դրա հիմնավորումը, որն էլ արել է «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» խմբակցության փոխնախագահ Հասիփ Քափլանը. «Հայտարարությունը չենք ստորագրել, որովհետեւ բազմաթիվ անընդունելի ձեւակերպումներ էր պարունակում: Սա այն տեքստը չէ, որ ընդունեինք, գրի է առնվել ռասիզմի դիրքերից»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Կիմ Չոն Ինը իշխանությունը կկիսի զինվորականների հետ



ԿԺԴՀ հանգուցյալ առաջնորդ Կիմ Չոն Իրի կրտսեր որդին՝ երկրի նոր ղեկավար, «Մեծ ժառանգորդ» Կիմ Չոն Ինը մտադիր է կառավարել ոչ թե միանձնյա կերպով, այլ զինվորական ղեկավարության հետ համատեղ: Այդ մասին Չինաստանում Ռոյթերի թղթակցին պատմել է մի անանուն աղբյուր:

Վերջինիս խոսքերով՝ ԿԺԴՀ զինվորական ղեկավարությունը Կիմ Չոն Իրի փեսա, 65-ամյա Ջան Սոն Թեկի գլխավորությամբ հավատարմության երդում է տվել Կիմ Չոն Ինին: Նույն աղբյուրը ԿԺԴՀ-ում զինվորական հեղաշրջման հեռանկարը համարում է քիչ հավանական:

Ռոյթերի աղբյուրը հատկանշական է համարել դեկտեմբերի 19-ին՝ Կիմ Չոն Իրի մահվան ազդարարումից հետո ԿԺԴՀ-ում փոքր հեռահարության հրթիռների փորձնական արձակումը: «Հրթիռների արձակմամբ ԿԺԴՀ-ն ուզում էր մյուս երկրներին ցուցադրել, որ կարող է իրեն պաշտպանել», պարզաբանել է աղբյուրը:

Գործակալությունը նշում է, որ նույն աղբյուրը ճշգրտորեն կանխատեսել էր ԿԺԴՀ իրադարձությունների ընթացքը 2006 թ. այնտեղ միջուկային փորձարկումների անցկացման նախօրեին: Աղբյուրի խոսքերով՝ առաջիկա տարիներին հյուսիսկորեացիները նման փորձարկումներ չեն իրականացնի, եթե միայն նրանց չդրդեն դա անել:

1994-ից երկիրը միանձնյա կառավարած Կիմ Չոն Իրի մահվան մասին դեկտեմբերի 19-ին հաղորդել էր ԿԺԴՀ հեռուստատեսությունը: Պաշտոնական տվյալների համաձայն, 69-ամյա առաջնորդը մահացել էր դեկտեմբերի 17-ին, սրտի նոպայից: Ժառանգորդ էր հռչակվել նրա կրտսեր որդի Կիմ Չոն Ինը:

Հյուսիսկորեացի առաջնորդի հուղարկավորությունը նախատեսված է դեկտեմբերի 28-ին:

ՄՈՍԿՎԱ

# Մեդվեդեւի աշխատակազմի նախկին ղեկավարը՝ Դումայի նորընտիր նախագահ



Համաձայն ՌԴ Պետդումայի ընթացակարգի՝ երեկ նորընտիր Դումայի առաջին նիստը բացեց ամենատարեց պատգամավորը: Նա 6-րդ գումարման Դումայում իշխող «Եդինայա Ռոսիա»-ի ներկայացուցիչ, Երկրորդ աշխարհամարտի մասնակից եւ ԽՍՀՄ կուսակցական գործիչ Վլադիմիր Դոլգիխն է: Դումայում երեկ, ավանդույթի համաձայն, ձայն են տվել նաեւ խորհրդարան մտած բոլոր կուսակցությունների ամենատարեց ներկայացուցիչներին. Կոմկուսից՝ Ժորես Ալֆերովին, լիբերալ-դեմոկրատներից՝ Վլադիմիր Ժիրինովսկուն (որը, փաստորեն, լիբերալ-դեմոկրատների ոչ միայն նախագահն է) եւ «Սպրավեդլիվայա Ռոսիա»-ից Յուրի Սելիվանովին:

Ավանդույթներին ու արարողակարգին հավատարմություն ցուցաբերելուց հետո Դուման սկսել է ՌԴ պառլամենտի ստորին պալատի նախագահի, նրա տեղակալների ու հանձնաժողովների նախագահների ընտրության գործընթացը: Նախքան արդյունքներին անդրադառնալը նշենք, որ Պետդումայի այս կազմը կգործի 5 տարի նախկին 4 տարվա փոխարեն, նախագահը կունենա երկու «առաջին տեղակալներ»: Հիշեցնենք՝ 6-րդ գումարման Դումայում «Եդինայա Ռոսիա»-ն ունի 238 պատգամավորական մանդատ, Կոմկուսը՝ 92, լիբերալ-դեմոկրատները՝ 56 եւ «Սպրավեդլիվայա Ռոսիա»-ն՝ 64:

Հենց այս կազմով Դուման երեկ նախագահ ընտրեց նախկինում ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար, իհարկե՝ «Եդինայա Ռոսիա»-ի ներկայացուցիչ Սերգեյ Նարիշկինին: Ուշագրավ է, որ վերջինիս Դումայի խոսնակի պաշտոնում ընտրվելուն կողմ են քվեարկել ճիշտ 238 պատգամավոր, ուղիղ այնքան, որքան կազմ ունի «Եդինայա Ռոսիա»-ն: Լիբերալ-դեմոկրատներն առաջադրել էին Ժիրինովսկուն, որը իր նախընտրական ելույթում խոստացավ «արմատապես փոխել Դումայի աշխատանքը»: Կոմունիստների թեկնածու Իվան Մելնիկովը խոստացավ «լսել հասարակության ձայնը եւ ներդնել պատգամավորին հետ կանչելու մեխանիզմ», իսկ «Սպրավեդլիվայա Ռոսիա»-ի թեկնածուն՝ Սերգեյ Միրոնովը, որը նաեւ ՌԴ նախագահի թեկնածու է, ոչ այնքան խոսեց իր՝ Դումայի նախագահի պաշտոնում ընտրվելու, այլ երկրի նախագահի պաշտոնում ընտրվելու մասին. «Եթե ես ընտրվեմ երկրի նախագահ, 2012-ի ամռանը կցրեմ այս Դուման եւ կանցկացնեմ նոր խորհրդարանական ընտրություններ», ասաց Միրոնովը:

Ինչպես արդեն նշեցինք, Դումայի խոսնակ ընտրվեց Նարիշկինը, որի «առաջին տեղակալներից» մեկը «Եդինայա Ռոսիա»-ի ներկայացուցիչ Ալեքսանդր Ժուկովն է, մյուսը՝ կոմունիստ Իվան Մելնիկովը: Բացի այս երկուսից, Նարիշկինը կունենա նաեւ 6 «սովորական տեղակալներ», որոնցից 4-ը՝ կրկին «Եդինայա Ռոսիա»-ից: Իշխող կուսակցությունը պահպանել է նաեւ 15 նշանակալից խորհրդարանական հանձնաժողովների նախագահների պաշտոնները: Մասնավորապես սահմանադրական օրենսդրության հանձնաժողովի, քաղաքացիական, քրեական, արբիտրաժային օրենսդրության հանձնաժողովի, աշխատանքի, սոցիալական քաղաքականության եւ վետերանների հարցերի հանձնաժողովի, կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովի, տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովի, ինչպես նաեւ բոլոր «տնտեսական» հանձնաժողովների նախագահների պաշտոնները, օրինակ՝ բյուջեի եւ հարկային եկամուտների հանձնաժողովի, տնտեսական քաղաքականության, ֆինանսական շուկայի հանձնաժողովների նախագահների պաշտոնները: Կարեւոր հանձնաժողովներից՝ պաշտպանության հանձնաժողովի նախագահությունը կիրականացնի Կոմկուսի ներկայացուցիչը: Կոմունիստներին է տրվել ընդհանուր առմամբ 6 հանձնաժողով, այդ թվում, օրինակ, Հեռավոր Արեւելքի եւ Հյուսիսի հարցերով հանձնաժողովի եւ տրանսպորտի, ինչպես նաեւ հողային շինարարության հանձնաժողովների նախագահությունը եւ այլն: Լիբերալ-դեմոկրատները որքան էլ նշում էին, թե «վերեւների հետ պայմանավորվածությամբ» իրենց պետք է տրվի միջազգային հարցերի հանձնաժողովը, սակայն ստիպված պետք է բավարարվեն միայն ԱՊՀ երկրների հետ գործակցության հանձնաժողովի նախագահությամբ, իսկ միջազգային հարցերը անցել են «Եդինայա Ռոսիա»-ին: Իսկ «Սպրավեդլիվայա Ռոսիա»-ի համար, որը լիբերալ-դեմոկրատների պես կնախագահի 4 հանձնաժողովներում, հատուկ ստեղծվել է կոմունալ քաղաքականության եւ կոմունալ տնտեսության հարցերի հանձնաժողովը:

Ինչ վերաբերում է Պետդումայի նոր նախագահին, ապա Նարիշկինը նոր պաշտոնում իր առաջին ելույթում մասնավորապես ասել է. «Չնայած խորհրդարանական տարբեր խմբակցությունների աշխատանքը կոորդինացնելը այնքան էլ հեշտ չի լինելու, բայց ես վստահ եմ, որ մենք ավելի շատ նույնական ենք, քան տարբեր: Մենք բոլորս ՌԴ քաղաքացիներ ենք եւ ցանկանում ենք մեր երկրին բարգավաճում. հենց այս նպատակով էլ մենք ընտրվել ենք Դումայի պատգամավորներ: Ես վստահեցնում եմ, որ յուրաքանչյուր խմբակցության ծրագիր անհրաժեշտ քննարկման ու ուշադրության կարժանանա: Դումայի այս կազմը դրա հիմքը տալիս է»:

ՆՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

# «Ազգի» հյուրասրահում է ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը

***2011 թվականը հագեցած էր բազմաթիվ ու բազմաբնույթ ծրագրերով, մշակութային միջոցառումներով, որոնց «Ազգը» պարբերաբար անդրադարձել է: Մշակութային տարին եզրափակվում է եւ այդ առիթով թերթի հյուրասրահի հյուրն է ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: Թե ինչպե՞ս են եզրափակում տարին, ի՞նչ հաջողություններ գրանցվեցին, ի՞նչ դժվարություններ կան, ի՞նչ կարեւոր ձեռնարկներ տեղի ունեցան եւ ինչպիսի՞ն է լինելու 2012 թվականը, հատկապես, որ Երեւանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակվել է «Գրքի մայրաքաղաք»- այս հարցերին պատասխանեց ՀՀ մշակույթի նախարարը:***




«Տարին մոտեցավ ավարտին եւ այն իրապես մշակութային էր: Ամփոփելը միշտ շատ դժվար է, որովհետեւ ըստ էության ավելի շատ մտածում եմ, թե ինչ չհասցրեցի անել, քան այն, ինչ արվել է: Իհարկե այն ինչ ծրագրել էինք՝ ամբողջովին կատարեցինք: Բայց անշուշտ ծրագիրը կատարելուց ի հայտ եկան մի շարք խնդիրներ, որոնք ավելի շատ այսօր ուղղված են ենթակառուցվածքների զարգացմանն ու կատարելագործմանը: Սա էր 2011թվականի գերխնդիրը, որը կլինի նաեւ եկող տարվա ծրագրերի հիմքում: Դա նշանակում է մաքսիմալ արդյունավետ ու հարմարավետ դարձնել մշակութային արժեքների, մշակութային արտադրանքի սպառումը, եւ մյուս կողմից՝ նորմալ պայմաններ ապահովել ստեղծագործողների համար: Առաջին հերթին խոսքը վերաբերում է մեր թանգարանային համակարգին, որը այսօր ամբողջովին անցնում է թվային ռեժիմով ծառայությունների մատուցմանը: Բնականաբար դա իր հետ բերում է բազում խնդիրներ ու մեծ ծավալի աշխատանք, որը ներկայումս իրականացնում են թանգարանները:

Մյուս կողմից, դա վերաբերում է ծառայությունների սպառմանը համերգային կազմակերպություններում: Այդ աշխատանքները կշարունակվեն նաեւ 2012 թվին: Իսկ ընդհանուր առմամբ, այն բոլոր գերակա ուղղությունները, որոնք մենք սահմանել էինք՝ բոլոր ծրագրերը իրականացրեցինք: Մասնավորապես դա վերաբերում է կադրերի վերապատրաստմանը, մի բան, որ պարզ աչքով չի երեւում՝ ակնկալում ենք արդյունքը ունենալ մոտ ապագայում:

Մյուս կարեւոր հատվածը մեր գործառույթներում վերաբերում է մանկապատանեկան տարիքի երեխաների կարողությունների զարգացմանը, որին հատուկ ուշադրություն է դարձվել հատկապես մարզերում: Պատմամշակութային ժառանգությունը պահպանող կառույցների արդիականացումը, կադրերի կատարելագործման խնդիրները շատ կարեւոր են եւ այս տարվա ընթացքում լայն ծավալով այդ աշխատանքները կատարվել են:

Անցյալ տարվա ընթացքում մի շարք երկրներում իրականացրեցինք լայնամասշտաբ միջոցառումներ՝ Գրքի տոնավաճառ՝ առանձին սալոններում, գիտական միջազգային կոնֆերանսներ- նվիրված «Հայ գրատպության 500-ամյակին», ցուցահանդեսներ տարբեր երկրներում, «Հայկական մշակույթի օրեր» եւ շատ ու շատ կարեւոր միջոցառումներ: Դրանցից առանձնացնեմ վերջին կարեւոր միջոցառումը՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին, որի հանրահռչակման, գովազդման, ներկայացման մեկնարկի ակորդը եղավ դեկտեմբերի 14-ին Վենետիկի «Կոռեռ» հնագիտության թանգարանում, իսկ աշխարհում ամենահինը համարվող «Մարչանա» ազգային գրադարանում բացվեց ցուցահանդես, որում ներկայացված էին ոչ միայն Հայաստանից, այլեւ այլ երկրների թանգարանների պահոցներում գտնվող հայկական մշակութային արժեքներ: Ուրախալի էր նաեւ, որ տպագրվեց այդ ցուցահանդեսի եռալեզու կատալոգը (իտալերեն, անգլերեն, ֆրանսերեն): Այդ ցուցահանդեսով մենք թողեցինք մեր հետքը եւ այն, ինչ ներկայացված էին ցուցահանդեսներին, դարձավ բազմահազար օտարերկրացիների հետաքրքրության աղբյուր, հայ մշակութային արժեքներն ճանաչել տալու լավագույն հնարավորություն: Նշեմ նաեւ, որ ուշագրավ էր Հռոմում բացված «Հայկական մայրաքաղաքները մետաքսի ճանապարհին» խորագրով ցուցահանդեսը, որով մենք ըստ էության, կարծես թե առաջին անգամ մասնակցեցինք այդ կարգի ցուցահանդեսի եւ ֆիքսեցինք, որ մեր երկու հնամենի մայրաքաղաքները՝ Դվինն ու Անին հանդիսացել են մետաքսի ճանապարհի հանգրվաններ: Չնայած մենք այդ մասին խոսում ենք, սակայն այսպես երբեք չէինք ներկայացրել: Այդ ցուցահանդեսի կատալոգը նույնպես տպագրվեց շատ հայտնի իտալական «Սկիռա» հրատարակչության կողմից, որն արդեն 2009-ին մեկ լուսանկարչական ալբոմ տպագրել էր Հայաստանի բնաշխարհով:

Ինչ վերաբերում է առաջիկա ծրագրերին, ասեմ որ արդեն մեկնարկած հոբելյանական միջոցառումների հիմքը լինելու է մեր գրավոր ժառանգությունը, որով պետք է փորձենք մեր հասարակությանը հաղորդակից դարձնել գրքին ու ընթերցանությանը: Սա է մեր գերնպատակը: Եթե մենք սա կարողանանք անել, ուրեմն մեր ծրագրերը հաջողված կարող ենք համարել: Մեր հանրապետության 40 քաղաքներում կստեղծվեն գրավաճառ կետեր, միջոցառումները կլինեն բազմաբնույթ, որոնց հիմքը գիրքն ու գրականությունն է լինելու: Ուշագրավ է, որ սկիզբ է առել «Ընթերցանության խաչմերուկ» շարժումը, որին հասարակության բոլոր շերտերը կմիանան: Հոբելյանական ծրագրին հայտեր են ներկայացրել 10 նորաստեղծ կառույցներ, հասարակական կազմակերպություններ, որոնք իրենց ծրագրերով կմիանան «Գրքի մայրաքաղաք» ծրագրին: Դեռ ստացվում են հասարակությունից առաջարկներ, որոնք քննարկման փուլում են:

Հաշվի առնելով, որ առջեւում Ամանոր է, շնորհավորում եմ մեր ազգաբնակչությանը, մաղթում ամենալավն ու բարին, միշտ մշակույթով ու մշակույթի հետ»:

Գրի առավ եւ ամփոփեց՝
ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆԸ

# Ռուբեն Ադալյանի պատկերային վերացարկումները

**Ռուբեն Ադալյանի** նորընծա ալբոմը, որ ներկայացնում է գեղանկարիչ **Արա Հայթայանը**, փորձում է պատասխաններ գտնել՝ արվեստի եւ արդիականության սահմանների:

Արվեստային փոփոխություններն անմիջականորեն պայմանավորված են ժամանակաշրջանի դիմագծով: Ռուբեն Ադալյանն այն սակավ նկարիչներից է, որի անշփոթելի ձեռագիրն այնպիսի փոփոխություններ է հաճախ կրում, որ առաջին հայացքից այնուամենայնիվ անճանաչելի կարող է թվալ: Նկարչական մտածողությունը, աշխարհի ընկալման եւ արտաբերման այն կերպերը, որ ի հայտ է բերում նա իր ստեղծագործական ընթացքի անգամ սկզբնական փուլերում, տվյալ ժամանակի մեջ բնավ չեն տեղավորվում, ասես մի խզված տարածք՝ ինքն իր մեջ բնակվող, մտածող, ինքնաբավ, ապրում է: Աիավասիկ Ադալյանի 1958-66, 1967-79, 1980-95 թվականների աշխատանքները, որոնք խորհրդային իրականության մեջ ստեղծվելով՝ բնավ կապ չունեն այդ շրջանի ո՛չ գեղարվեստական մտածողության, ո՛չ էլ գեղարվեստական ձեւերի հետ: Սոցռեալիզմից այստեղ հետքի նշույլ իսկ չկա. այս արվեստում կյանքը իռացիոնալ է, պատկերային աշխարհի վերացարկումը, անառարկայական տարածությունները հագեցված են մտածողական զուտ ադալյանական շերտերով: Նկարիչը ինքնաստեղծում է աշխարհը իր պատուհանից, սեփական ես-ի խորքերից արտածում նկարչական նյութը, ստեղծում նոր հորինվածքներ:




60-ականների սերունդը, որի առաջատարներից է Ադալյանը, եւ նրան նախորդող առաջադեմ մտավորականներն ու արվեստագետները, կոտրել էին ընդունված կարծրատիպերը եւ գեղարվեստական մտածողության նոր ձեւերը արվեստին նոր շունչ էին բերել արդեն: Աբստրակտ արվեստը կամ դրա ձեւերի գիտակցված աղավաղումը հայ կերպարվեստում չամրագրված եւ չընդունված միջոց-լեզու էր դեռեւս, որով մտածում եւ արտահայտվում էր Ռ. Ադալյանը դեռ այդ տարիներին: Ալբոմում ընդգրկված գործերը, բացառությամբ վերջին 20 տարիներին մի քանիսի ցուցադրության, ո՛չ հրատարակվել, ո՛չ ցուցադրվել են առայժմ: Ադալյանական մտքի ազատությունները եւ դրանց դրսեւորումները զարմանալի անսպառ են թվում: Նա մեր ամենաբեղմնավոր ստեղծագործողներից է, բայց միաժամանակ սակավ ներկայացվածներից, հատկապես նրա նկարչության այս տեսակը, աբստրակտ ոճի ստեղծագործությունները: Առհասարակ բազմաոճությունը Ադալյանի արվեստի ամենաբնորոշ գիծն է, իր համար սահմանազատումներ չկան, ավանդական նկարչաձեւերից նա շատ սահուն անցում է կատարում նոր ուղղություններ ու ոճեր, մինչեւ ամենամոդեռնը: Սակայն ամենուրեք նա իր ձեռագրի անհատականության կրողն է: Սիրում է փոխել իր շուրջը, կերտել միանգամայն նոր աշխարհ, այդ նորի մեջ ինքնանորանալ: Այն ձեւագոյացումները, ինչ նա փոխանցում է կտավին, իր ներքին աշխարհում կուտակված էություններ, մտաէակներ են: Ամենաասովորական իրը նա կենդանացնում ու շունչ է դրան հաղորդում: Եվ սա հաջողվում է, որովհետեւ նկարչի վրձնի տակ ամեն ինչ շարժման մեջ եւ ամեն ինչ գեղագիտորեն մշակված է:

*«Հանգրվաններ չճանաչող, ժանրային կաղապարվածությունից ազատ, ոճական միասնությունը զանց առնող, մեկ «բացարձակ նկար»-ից դեպի բազմախնդիր շարքերը գնացկող: Այս ամենով հանդերձ, առկա՞ է արդյոք մի չափանիշ, որը տեսանելի կդարձնի այն միասնական ողնաշարը, որի շուրջը կառուցվում է Ռուբեն Ադալյանի ստեղծագործությունը: Ինչը որ ի զորու կլինի ներքին կապ մատնանշել արվեստագետի մի գործից մյուսը: Մանավանդ, երբ արտաքին կամ ձեւային ընդհանրությունները երբեմն բացակայում են: Մանավանդ, երբ յուրաքանչյուր շարք, առանձին ստեղծագործություն իր առջեւ խնդիր է դնում մտածողության տիրույթներում հասնել դասական կատարելության»:* Արա Հայթայանը ալբոմի առաջաբան-վերլուծականում նման հարցադրում է անում եւ որի պատասխանը ինքն էլ տալիս է. *«Ադալյանը մոտենում է մշակույթին որպես բարձրագույն գործունեության ոլորտ: Ընկալելով մշակույթը առհասարակ որպես մարդաստեղծ գործառույթ, կերպարվեստը ընկալելով որպես «ձեւեր»-ի քննության ասպարեզ, դիտարկելով արվեստագետին որպես մարդկության եւ միջավայրի վերափոխման վճռորոշ օղակ»:*

Ադալյանական ձեւափոխությունների համակարգը իմաստային ներքին շեշտադրում ունի, շատ տեսանելի արտահայտված, դա նկարչի՝ կյանքը գոյավորող եւ նրա տեւականությունը ապահովող բնական օրենքի՝ շարժման, պայքարի, հակադրամիասնությունների գիտակցված հավաստումն է: Նրա յուրաքանչյուր նկար շարժման ներքին տարածության մեջ է, երբեմն դինամիզմը պոռթկալու աստիճան սաստիկ է. թվում է՝ ուր որ է ահա ծառս եղած ձիերը կպոկվեն տեղից ու դուրս կթռչեն նկարից... Սա նաեւ վերաբերմունք է կյանքին՝ նրա օրգանական փոփոխությունների միասնականության մեջ իր տեղը որոնելու, գտնելու, լինելու, ձուլվելու գոյության կերպերին, որով եւ հեղինակը փոխում է աշխարհի իր ընկալման ծավալային ու տարածային պատկերը: («Կոմպոզիցիա», 1978, «Լուսարձակում», 1969, «Կոմպոզիցիա», «Շփում»):

Ձեւաստեղծ նկարիչ, նկարչական բազում նորագոյացումների հեղինակ, որ ստեղծագործության օբյեկտ դարձնում է որեւէ իր՝ մետաղալար, ալյումինե թիթեղ, փայտ, ապակի եւ դրանց գեղարվեստական արժեքը պայմանավորում գեղագիտական այն հայացքով, որ կրում է ինքն իր ներսում: Ստեղծագործելու կիրքը նրան մղում է ամեն երեւույթի, իրի մեջ տեսնել գեղարվեստական նորահայտնություններ, եւ ձեւի ամեն շարժման մեջ նոր գաղափար, նոր կյանք է դնում: Նրա արվեստի բազմազանությունը երբեմն շփոթեցնող է. տարբեր են նաեւ մատուցման եղանակները, կատարման տեխնիկան եւ ընտրված նյութը (տեմպերա, օրգալիտ, յուղաներկ, մելան, գուաշ, ջրաներկ): Այսով հանդերձ, Ադալյանը գունային չափաբաժիններում բավական զուսպ է, հակված է գունային երանգների մեղմ բազմազանությամբ աշխատել, անգամ վառ գույները նրա նկարներում այդպիսին չեն ընկալվում, պայմանավորված, թերեւս, նրա արվեստում ձեւի առաջնայնության հանգամանքով: Ադալյանի համար ոճական փոփոխությունները չեն սահմանազատվում ստեղծագործական փուլերով: Նույն թվականին նա ստեղծել է «Մեր բակը» իմպրեսիոնիստական ոճով կտավը եւ միեւնույն ժամանակ նույն հաջողությամբ՝ «Կոմպոզիցիա» շարքերը: Գիծը, գծի շարժումը եւ փոփոխությունը դառնում են այս նկարչության առանցքը, երկրաչափական պարզ պատկերը դիտվում է աշխարհը թարգմանելու եւ իրեն, իր խոհն ու զգացմունքը արտահայտելու միջոց:

Ինչպես ասվեց, շարժումը նրա նկարչության հոգին է եւ արագությունը՝ նույնպես, որի առկայությամբ ժամանակի եւ տարածության մեջ իրերը փոխում են իրենց նախնական տեսքը, ձեւերը- փոխակերպվում: Այսպես՝ նկարչի դասական ձիերի սանձակոտոր ընթացքը ասես վերափոխվում եւ նմանվում է շարժման մեջ գալարվող բոցին: Այդպիսին է նաեւ «Հոգեբանական հորինվածք»-ը՝ իբրեւ մարդու ներքին փոփոխության արձագանք եւ առհասարակ կյանքի շարժման բոլոր արտացոլանքները՝ ուղղակի եւ անուղղակի («Դինամիկ հյուսվածք», «Դինամիկ կառույց», «Շարժման մեջ», «Ուր են թռչում սեւերը», «Բոցը շարժման մեջ», «Համաստեղություն», «Սպիտակով սեւի վրա», «Շփում» շարքը, «Մետամորֆոզ», «Ծուխ» եւ այլն): Մարդկային դրամայի արտահայտումը այսպիսի ոճի մեջ դժվար իրագլվող են, երբ հաղորդականություն է ապահովվում, բայց Ռուբեն Ադալյանին հաջողվել է՝ «Ռեքվիեմ», «Հորիզոնական դրամա», «Վիրավոր սիրտը»: Այս վիճակները ավելի սրում են հաճախակի հայտնվող մուգ ֆոները եւ սեւի գծաշերտային նետումները:

Ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոխվում: Նկարիչը շատ արագ փոխում է նյութը, գաղափարը, թեման, ժանրը, ոճը, ուղղությունը, դրանց արտահայտման ամենատարբեր ձեւեր գտնում: *«Իր արվեստը կառուցելով մշակույթի զարգացման արեւմտյան, դասական եւ սինթետիկ մեթոդների շուրջ՝ նա հավատում է ունիվերսալ լեզուների, հավաքական լեզվամտածողության հնարավորությանը:*

*... Առաջ քաշելով արվեստային այլ արժեհամակարգերի գոյացման խնդիր՝ նա դիտողին դրդեց պարել աշխարհայացքային վերանայումներ, արվեստային միջավայրին չպարգեւելով պարզունակ գեղագիտական հարմարավետություն»*, գրում է Ա. Հայթայանը:

«Ռուբեն Ադալյան»-հետահայաց պատկերագիրքը հայացք է մեր ժամանակի հայ լավագույն նկարիչներից մեկի բազմաշերտ ու խորունկ արվեստի քիչ հայտնի էջերին՝ անառարկայական (աբստրակտ) նկարչությանը: Զետեղված 120 գունավոր վերատպությունները (գեղանկար, գրաֆիկա, քանդակ, ռելիեֆ, կոլաժ) ամբողջացնում են նրա ստեղծագործական կյանքի՝ 1958-1995 թվականների այս ուղղությամբ արված գործերը. միաժամանակ բազում հարցեր ծնում՝ ի փոխազդեցություն ներկայացված բազում անակնկալների:

Ալբոմի հեղինակ եւ հրատարակիչ՝ Արա Հայթայան, ձեւավորում եւ տպագրություն՝ «Փրինթինֆո», 2011 թ.:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Երկու մասնակից, երկուսն էլ աշխարհի չեմպիոն




ՖՈՏՈԼՈՒՐ

Վերջերս Ղազախստանում կայացած բազկամարտի աշխարհի հերթական առաջնությունում մեծ հաջողության հասան մեր մարզիկները: Մրցումներին մասնակցած մեր 2 բազկամարտիկներն էլ նվաճեցին աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Մեծահասակների մրցաշարում մինչեւ 75 կգ քաշայինների մրցավեճում ձախ ձեռքով վարժությունում չեմպիոն հռչակվեց Վրեժ Սեդրակյանը, իսկ պատանիների մրցաշարում աջ ձեռքով մրցաձեւում ոսկե մեդալի արժանացավ Աշոտ Ադամյանը: Երեկ նրանք հավաքականի մարզիչ, աշխարհի չեմպիոն, աշխարհի եւ Եվրոպայի եռակի գավաթակիր Վլադիմիր Մնացականյանի հետ հյուրընկալվել էին մամուլի «Արմաս» ակումբում:

Վլադիմիր Մնացականյանը նշեց, որ աշխարհի առաջնությանը մասնակցեցին 52 երկրների 1258 մարզիկներ: Սովորաբար Հայաստանի հավաքականը նման խոշոր մրցաշարերին մասնակցել է ավելի մեծաքանակ մարզիկներով: Սակայն այս անգամ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով միայն երկու բազկամարտիկ մեկնեց մրցումների: Ընդ որում Վրեժ Սեդրակյանին հովանավորել էր «Նուշիկյան» ընկերությունը, իսկ Աշոտ Ադամյանը մեկնել էր անձնական միջոցների հաշվին: Սա մի փոքր տարօրինակ է, քանի որ բազկամարտի ֆեդերացիայի պատվավոր նախագահը նախկին բազկամարտիկ, ՀԱՕԿ-ի ներկայիս նախագահ Գագիկ Ծառուկյանն է: Ըստ հավաքականի մարզչի, հանգամանքների բերումով չէր հաջողվել գումար խնդրել Գագիկ Ծառուկյանից, որը բացակայում էր Հայաստանից:

Վրեժն ու Աշոտը նշեցին, որ բավականին սուր մրցապայքար էր ծավալվել առաջնությունում: Աշոտը հաղթեց բոլոր 8 մրցակիցներին, ընդ որում եզրափակիչում շատ արագ պարտության մատնեց ղազախ մարզիկին: Բազկամարտիկները նշեցին, որ իրենց մարզաձեւում ոչ միայն ուժն է կարեւոր, այլեւ արագությունը, դիմադրողականությունը: Ընդհանրապես պետք է զարգացած լինեն մարմնի տարբեր մասերի մկանները: Աշոտ Ադամյանը Հայաստանի քառակի չեմպիոն է, Եվրոպայում եւս ուժեղագույնն է ճանաչվել: Եվ ահա այդ տիտղոսներին նա ավելացրեց նաեւ աշխարհի չեմպիոնի կոչումը: Վրեժ Սեդրակյանը մինչ այդ 2006-ին դարձել էր Եվրոպայի փոխչեմպիոն:

Ընդհանուր առմամբ մրցաշրջան-2011-ը շատ հաջող էր մեր բազկամարտիկների համար: Հունիսին Թուրքիայում կայացած Եվրոպայի առաջնությունում հայ մարզիկները նվաճել են 1 ոսկե, 2 արծաթե եւ 1 բրոնզե մեդալ: Աշխարհի գավաթի խաղարկությունում մեր մարզիկները շահել են մեկական ոսկե եւ արծաթե մեդալ: Հաջորդ տարի հայ բազկամարտիկները մասնակցելու են աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններին, ինչպես նաեւ աշխարհի գավաթի խաղարկությանը:

Այսօր Հայաստանում բազկամարտով 350 մարզիկներ են զբաղվում, որոնց թվում նաեւ աղջիկներ կան: Սակայն վերջիններս դեռեւս մրցումների չեն մասնակցում: Մեր բազկամարտիկները հիմնականում մարզվում են ճարտարագիտական համալսարանի մարզադահլիճում: Ներկայումս քննարկվում է ֆիզկուլտուրայի ինստիտուտում բազկամարտի բաժին բացելու հարցը, ինչը կարող է նպաստել այդ մարզաձեւի մասնագետների պատրաստմանը: Իսկ բազկամարտի ֆեդերացիայի հիմնական հուզող հարցը ֆինանսական խնդիրներն են, որոնց լուծման դեպքում միջազգային ասպարեզում մեր մարզիկների հաջողություններն ավելի ծանրակշիռ կլինեն:

# Անհաջողությունները շարունակվում են

Թուրքիայի Մարդին քաղաքում ընթացող շախմատի աշխարհի թիմային առաջնությունում Հայաստանի կանանց հավաքականը շարունակում է անհաջող ելույթները: 4-րդ տուրում մեր շախմատիստուհիները մրցեցին առաջատարների խմբում գտնվող Հնդկաստանի ընտրանու հետ ու կրկին զիջեցին մրցակցին 0,5-3,5 հաշվով` կրելով 3-րդ անընդմեջ պարտությունը: Մեր հավաքականի առաջատար Էլինա Դանիելյանին ոչ մի կերպ չի հաջողվում կարգավորել խաղը: Համպի Կոների հետ պարտիայում Էլինան հստակ չգործեց, սխալներ թույլ տվեց ու 58-րդ քայլին հանձնվեց: Դանիելյանը մրցաշարում 3-րդ անընդմեջ պարտությունը կրեց:



Մեր թիմին միակ կես միավորը պարգեւեց Լիլիթ Մկրտչյանը` սպիտակներով 40-րդ քայլին հաշտություն կնքելով Հարիկա Դրոնավալիի հետ: Լիլիթ Գալոյանը զիջեց Սաչդեւ Տանիային, Մարիա Կուրսովային փոխարինած Նելլի Աղինյանն էլ պարտություն կրեց Սվամինաթան Սումյայի հետ մրցավեճում:

Իր հաղթարշավը շարունակեց առաջնության միանձնյա առաջատար Չինաստանի հավաքականը, որը 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց` 3-1 հաշվով պարտության մատնելով հաջող հանդես եկող վիետնամցի շախմատիստուհիներին: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Ռուսաստանի եւ Վրաստանի հավաքականների մրցավեճը: Գրանցվեց մարտական ոչ-ոքի, ընդ որում բոլոր 4 պարտիաներում մրցակցուհիները հաշտություն կնքեցին: 4-րդ տուրում ամենավերջինն ավարտված Վալենտինա Գունինայի եւ Նինո Խուրցիձեի պարտիայում խաղաղ դաշն կնքվեց 74-րդ քայլին:

Անդրանիկ հաղթանակը տոնեցին ուկրաինուհի շախմատիստուհիները, որոնք 3,5-0,5 հաշվով պարտության մատնեցին հույներին: Վերջապես առաջին միավորը վաստակեց առաջնության բացահայտ հետնապահ Հարավաֆրիկյան Հանրապետության հավաքականը, որը նախորդ 3 տուրերում մրցակիցներին զիջել էր միեւնույն 0-4 հաշվով: Այս անգամ հարավաֆրիկացիները թուրքերին պարտվեցին 1-3 հաշվով` 2 պարտիա ավարտելով ոչ-ոքի:

4 տուրից հետո Չինաստանի հավաքականն ավելի ամրապնդեց միանձնյա առաջատարի դիրքը: Չինացի շախմատիստուհիներն ունեն թիմային 8 եւ բոլոր պարտիաներում վաստակած 13,5 միավոր: 7 միավորով առաջատարին հետապնդում է Հնդկաստանի (ընդհանուր միավորները` 13) ընտրանին: Ռուսներն ունեն 6 (9,5), վրացիները` 5 (9,5) միավոր: ՀՀ հավաքականը թիմային 2 եւ բոլոր պարտիաներում վաստակած 6 միավորով նահանջեց 8-րդ հորիզոնական: 5-րդ տուրում մեր թիմը կմրցի թուրքերի հետ: Տուրի կենտրոնական հանդիպումը Չինաստանի եւ Ռուսաստանի հավաքականների մրցավեճն է:

ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

# ՀՀ հավաքականը տարին եզրափակեց 46-րդ տեղում

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը մրցաշրջան-2011-ը եզրափակեց ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակի 46-րդ հորիզոնականում: Նախորդ ամսվա համեմատ մեր ընտրանին պահպանել է իր դիրքը: Հայաստանի հավաքականն իր պատմության մեջ առաջին անգամ հայտնվեց աշխարհի ուժեղագույն 50 ընտրանիների ցանկում: Եվ դա շնորհիվ Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում ունեցած հաջող մրցելույթների:

2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցակիցներից ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում ամենաբարձր տեղը զբաղեցնում է 9-րդ հորիզոնականում հանգրվանած Իտալիայի ընտրանին: Դանիացիները 11-րդ տեղում են: Չեխերը զբաղեցնում են 33-րդ տեղը, բուլղարացիները 84-րդն են: Ամենացածր վարկանիշն ունի Մալթայի հավաքականը, որը զբաղեցնում է 156-րդ տեղը:



ՖՈՏՈԼՈՒՐ

Քանի որ անցած ամսվա ընթացքում շատ քիչ հանդիպումներ են անցկացվել հավաքականների մասնակցությամբ, ուստի դասակարգման ցուցակում փոփոխությունները չնչին են: Լավագույն տասնյակում ընդհանրապես ոչ մի փոփոխություն չկա, բոլոր հավաքականներն էլ պահպանել են իրենց դիրքերը: Նախկինի պես ցուցակը գլխավորում է աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականը, որին հաջորդում են հոլանդացիներն ու գերմանացիները: Լավագույն տասնյակում են նաեւ Ուրուգվայի, Անգլիայի, Բրազիլիայի, Պորտուգալիայի, Խորվաթիայի, Իտալիայի եւ Արգենտինայի հավաքականները:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից ամենաբարձր վարկանիշն ունի ՌԴ հավաքականը, որը 971 միավորով 12-րդ տեղում է: 2-րդ ցուցանիշն ունի Հայաստանի հավաքականը` 612 միավոր, որին հաջորդում են ուկրաինացիները, որոնք 55-րդ տեղում են: Մյուս երկրների ցուցանիշներն այսպիսին են. Էստոնիա (57-րդ տեղ), Բելառուս (64-րդ), Լատվիա (68-րդ), Վրաստան (73-րդ), Ուզբեկստան (75-րդ), Լիտվա (92-րդ), Ադրբեջան (112-րդ), Մոլդովա (136-րդ), Ղազախստան (138-րդ), Տաջիկստան (139-րդ), Թուրքմենստան (164-րդ), Ղրղզստան (191-րդ):

Նշենք, որ Իսպանիայի հավաքականն արդեն 4-րդ տարին անընդմեջ մրցաշրջանն ավարտում է ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակի առաջատարի դերում: Յուրօրինակ ռեկորդակիրը բրազիլացիներն են, որոնք 6 տարի (1994-1999-ին) շարունակ տարին եզրափակել են 1-ին հորիզոնականում:

ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում 2011-ին բոլորից շատ` 330 վարկանիշային միավոր է վաստակել Ուելսի հավաքականը: Դրա շնորհիվ Ուելսի ընտրանին վերադարձավ աշխարհի 50 ուժեղագույնների շարքը` զբաղեցնելով 48-րդ հորիզոնականը:

Ընդհանուր առմամբ մրցաշրջան-2011-ում ՖԻՖԱ-ի հովանու ներքո անցկացվել է պաշտոնական եւ ընկերական 1046 հանդիպում: ՖԻՖԱ-ի դասակարգման հաջորդ աղյուսակը կհրապարակվի 2012-ի հունվարի 18-ին:

# Մխիթարյանը բավարարվեց 5-րդ տեղով

Ավարտվեց շախմատի Բրազիլիայի առաջնությունը: 11-րդ տուրում ոչ-ոքի խաղալով Էնրիկե Մեկինգի հետ, Ռաֆայել Լեյտաոն վաստակած 9 միավորով հռչակվեց երկրի չեմպիոն: 2-րդ տեղը գրավեց 8,5 միավոր վաստակած Ալեքսանդր Ֆիեռը, որը հաղթեց Պաուլո Ռեյսին: Լեյտաոն եւ Ֆիեռը մրցաշարն անցկացրին առանց պարտության: Մրցանակային 3-րդ տեղը գրավեց բրազիլական շախմատի վետերան Էնրիկե Մեկինգը, որը վաստակեց 7 միավոր:

Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 6 միավորով հանգրվանեց 5-րդ հորիզոնականում: Ավարտական տուրում Մխիթարյանը սեւերով հաղթեց Յագո Սանտյագոյին: Հայ շախմատիստը հաջող էր մեկնարկել եւ 4 տուրից հետո վաստակած 3 միավորով գլխավորում էր աղյուսակը, սակայն հետագայում անհաջող հանդես եկավ, ինչը զրկեց նրան մրցանակային տեղից:

# Երկու հայ Գրոնինգենի շախմատի փառատոնում

Գրոնինգենում մեկնարկում է շախմատի ավանդական` 48-րդ փառատոնը: Ուժեղագույնների մրցաշարում հայտավորված 57 շախմատիստների թվում են Հայաստանի միակ ներկայացուցիչ, ՖԻԴԵ-ի վարպետ Լեւոն Գալոյանը եւ Անգլիան ներկայացնող ՖԻԴԵ-ի վարպետ Մերի Գրիգորյանը: Վերջինիս վարկանիշը (2026) ամենացածրն է մասնակիցների մեջ: Լեւոն Գալոյանն իր վարկանիշով (2231) 37-րդն է: Մասնակիցների ցանկը գլխավորում է Հոլանդիան ներկայացնող գրոսմայստեր Սերգեյ Տիվյակովը (2647), որին հաջորդում են ռուսաստանցի Եվգենի Ռոմանովը (2627) եւ ամերիկացի Ռոբերտ Հեսը (2625):

Շվեյցարական մրցակարգով կանցկացվի 9 տուր: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 6500 եվրո է, որից 2500-ը կստանա հաղթողը: Մրցաշարը կավարտվի դեկտեմբերի 30-ին:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

## Ադրբեջանական սխտորը...

*1-ին էջից*

Սա հակասում է թե՛ Առեւտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), թե՛ ընդհանրապես շուկայական տնտեսության սկզբունքներին: Քանի որ Թուրքիան համաձայնություն էր տվել մեր երկրի՝ ԱՀԿ մուտքին պայմանով, որ ինքը մեր երկրի հետ տնտեսական հարաբերություններում այդ կազմակերպության սկզբունքներով չի ղեկավարվելու, ապա ի՞նչն է խանգարում, որ մենք էլ նույն կերպ վարվենք:

Հայաստանից Թուրքիա մեկնող զբոսաշրջիկներին արգելել հնարավոր չէ, բայց թուրքական ապրանքների նկատմամբ էլ մեզ մոտ պետք է բարձր մաքսատուրքեր սահմանել: Դրա համար ոչ ոք Հայաստանին մեղադրել չի կարող, իսկ մեղադրելու դեպքում էլ անմիջապես կբարձրանար հարցը, թե ինչո՞ւ է Թուրքիան այդ կերպ վարվում եւ ինչո՞ւ է Թուրքիայից Հայաստան ներմուծումը հարյուրմիլիոնավոր դոլարներ կազմում, իսկ հակառակ ուղղությամբ՝ մեկ-երկու միլիոն դոլար: Հայաստանի կառավարությունը գուցե չի գնում թուրքական ապրանքների նկատմամբ մաքսատուրքի բարձրացմանն այն մտավախությամբ, որ դրանք շատ դեպքերում էժան են եւ սոցիալական խնդիրներ կարող են առաջանալ: Սակայն դա էլ արդարացված չէ, քանի որ թուրքական ապրանքները հիմնականում ավելի թանկ են, քան չինականը, եւ կարելի է դրանք փոխարինել տեղական կամ այլ երկրից ներմուծվող ապրանքներով: Ծայրահեղ դեպքում, անհրաժեշտ է բարձր մաքսատուրք սահմանել գոնե այն թուրքական ապրանքների նկատմամբ, որոնցից արտադրվում են նաեւ Հայաստանում:

Ի դեպ, մինչեւ վերջերս հայկական բեռնատարները իրավունք չունեին մուտք գործել Թուրքիայի տարածք, բայց եկող տարվանից նման հնարավորություն նրանք արդեն կունենան, բայց միայն դեպի Եվրոպա գնալու դեպքում: Սա թեեւ շատ փոքր, բայց դրական զարգացում է: Մնում է միայն, որ խորանա եւ տարածվի, ինչը քիչ հավանական է թվում վերեւում նշված պատճառներով: Հետեւաբար, թուրքական ներմուծման դեմ համապատասխան միջոցառումների կիրառումն անհրաժեշտ է, քանի դեռ երկու երկրների առեւտրատնտեսական հարաբերությունները չեն ձերբազատվել քաղաքական գործոններից եւ չեն դարձել հավասարակշռված:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| | *Աճուրդով օտարվող գույքերի ցանկ* | | | | |
| 1 | Զարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2251.36 | 1244 | 498,750,000 |
| 2 | Բոյրյան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 312.48 | 276.08 | 16,200,000 |
| 3 | Ստեփանյան փողոց 1/9 | կաթսայատուն | 163.62 | 133 | 9,200,000 |
| 4 | Վիլնյուսի փող. Թիվ 91/2 | կաթսայատուն | 243.18 | 218.3 | 14,850,000 |
| 5 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 14,000,000 |
| 6 | Ռուբինյանց փողոց թիվ6/5 | կաթսայատուն | 353.75 | 344.65 | 15,230,000 |
| 7 | Պ.Ս ակի փող. Թիվ 1/6 | կաթսայատուն | 137.08 | 137.08 | 6,400,000 |
| 8 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.5 | 195.5 | 9,867,000 |
| 9 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 32,895,000 |
| 10 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328 | 328 | 10,093,000 |
| 11 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 22,550,000 |
| 12 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 14,325,000 |
| 13 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.3 | 262.3 | 8,956,000 |
| 14 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161 | 161 | 11,466,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը պտտաակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ հունվարի 16-ին ժ.16.00-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2012թ հունվարի 16-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ՀՀ, ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

1. Բնակարան, որի մակերեսն է՝ 73,4 ք.մ, ինքնակամ շինություն, ընդ. մակերեսը՝ 1,4 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր համայնք, Վ. Փափազյան փողոց, 27 շենք, թիվ 13 բնակարան : Լոտի մեկնարկային գինը՝ 24800000 ՀՀ դրամ:

Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով «բաց ընթացակարգով» 10.01.2012թ ժամը 12:00-ին: Երկրորդ փուլը 27.01.2012թ.-ից, ժամը 12:00-ին նույն հասցեում՝ դասական եղանակով «բաց ընթացակարգով»:

Բնակարանը հանդիսանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա եւ զբաղեցված է գրավատուի կողմից: ՀՀ քաղ. օր.-ի 272-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն բնակարանի իրացումից հետո բնակարանի սեփականատիրոջ պահանջով գրավատուն պարտավոր է մեկ ամսում ազատել բնակարանը:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 500000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ 09.01.2012թ. ժ. 16:00-ն աճուրդի առաջին փուլին մասնակցելու համար եւ 25.01.2012թ. ժամը 16:00-ն աճուրդի երկրորդ փուլին մասնակցելու համար, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որը առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը, ինչպես նաեւ հատուցել աճուրդին մասնակցելու հետեւանքով նրա կրած վնասները: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ 09.01.2012թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 11:00-ից մինչեւ 15:00-ն՝ վերը նշված հասցեով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-15 հեռախոսահամարով:

### Վաճառվում է

**Range Rover Westminster**

2003/2004 թթ., մոխրագույն, շարժիչը՝ 4,4 լ., (full): Մաքսազերծված չէ: Գերազանց վիճակ: Գինը՝ պայմանագրային:

**Հեռ.՝ 096 92 34 15:**

### Վաճառվում է

## Daewoo Matiz Best

մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 4 300 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր. (full), գործարանային վիճակ:

**Հեռ.՝ (091) 32-88-89**




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 21.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: